Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

Հայաստանի Հանրապետության Կրթության և Գիտության
Նախարարություն
Հայաստանի Պետական Ճարտարագիտական
Համալսարան

Վ.Հ.Վիրաբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1918-20 ԹԹ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Հայոց քաղաքական պատմության էջերից)

Երևան 1999.

ԳՄԴ **9(47.925)**

Հայաստանի հանրապետությունը 1918-20թթ. Կառավարության ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից).- Վ.Հ.Վիրաբյան: ՀՊՃՀ Երևան, 1999թ., 64 էջ:

Գրքույկը նվիրված է Հայաստանի Առաջին հանրապետության (1918թ. մայիսի 28 –1920թ. դեկտեմբերի 2) պատմության մի շարք սկզբունքորեն կարևոր հարցերի լուսաբանմանը՝ ՀՀ կառավարության ռազմաքաղաքական գործունեությանը 1918թ. հայ-վրացական պատերազմի ժամանակ և կուսակցությունների դիրքորոշման բացահայտմանը ինչպես այդ խնդրում, այնպես էլ բանակի, պատերազմի և այլ հարցերում:

Նախատեսված է պատմաբանների և միջազգայնագետների, ինչպես նաև բոլոր մասնագիտությունների ուսանողների համար:

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ.Գ.Թունյան, դոցենտ Ա.Մ.Հարությունյան,պատմական գիտությունների թեկնածու Ա.Ս.Վիրաբյան

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ, 1999:

1. *Սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակը: Հասարակական խմբերի կողմնորոշումը*

Հայաստանի Առաջին հանրապետության կազմավորումը և զարգացումը ընթանում էր դժվարին պայմաններում: Անհրաժեշտ էր կարճատև ժամանակամիջոցում ստեղծել պետական-քաղաքական կառույցներ (բանակ, ոստիկանություն, հատուկ ծառայություններ և այլն), ֆինանսատնտեսական համակարգ, լուծել պարենային և գաղթականների խնդիրները, հանդարտեցնել ազգային խմբերին, հաղթահարել ներքին հակասությունները, մի խոսքով, դուրս գալ քաոսի ու անիշխանության ճիրաններից:

1919թ. կեսերին, չնայած ընդհանուր ոգևորիչ որոշ տրամադրություններին,Հայաստանի հանրապետության իրական վիճակը մնում էր տագնապալից,սպասելիքները՝ պայմանական: Այդ է վկայում կառավարության նախագահ Ալ.Խատիսյանի դիմումը Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցչության ղեկավար Ե.Եվանգուլյանին. ,,Բոլոր շոգեքարշերը և վագոնները ուղարկված են Վրաստան: Ամբողջ շարժումը կանգնած է: Հաղորդեցեք Գրինին և Բրաֆին: *Սարսափելի սով է:* Ամեն օր հեռագրեք ինձ՝ ինչքան ալյուրով բեռնված վագոն է դուրս գալիս Թիֆլիսից: Անհապաղ հեռագրեք Բեգզադյանին՝ անհապաղ ուղարկի մազութ և բենզին, ոչ մի կաթիլ չկա... հակառակ դեպքում ամեն ինչ կմեռնի,,[1]:

Հարկ է ընդգծել, որ հայաստանյան պայմանների ,,անհեթեթությունը,, հրաշալի ընբռնում էին նաև ուրիշ հայ հասարակական-քաղաքական, մտավորական գործիչներ:

,,Երկրի վիճակը շարունակում է մնալ ծանր, հացը պակաս է, և սովը առատ հունձ է անում: Կտրված ենք արտաքին աշխարհից, Վրաստանը շարունակում է մեր ճամփան փակել, կարող եք երևակայել՝ ինչպիսի անհանդուրժելի կացություն է ստեղծվել մեզ համար: Ամերիկայից ուղարկվող ալիւրը շատ անկանոն է մեզ հասնում,առաջին հասած նավից մօտ 80.000 փութ տրվեց Բաթումի ազգաբնակչութիւանը, փոխանակ սովից կոտորվող Հայաստանին ուղարկելու: Առ հասարակ Անգլիայի քաղաքականությունը դեպի մեզ մինչև վերջերս եղել է տմարդօրեն դաժան և քիչ բարյացակամ,,[2],- գրում է Ս.Վրացյանը 1919թ. մայիսի 18-ին Հ.Յ.Դ. Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին:

1919թ. վերջին 6-7 ամիսների ընթացքում մեծագույն դժվարություններով հաջողվում է Հայաստան մտցնել 1.250 հազար փութ ալյուր, 225 հազար փութ ցորեն, 50 հազար փութ բրինձ, 6 հազար փութ եգիպտացորեն և այլն,[3] ինչպես նաև մինչև 500 հազար փութ մազութ և հում նավթ, մինչև 140 հազար փութ կերոսին, 25 հազար փութ բենզին, 45 հազար փութ փայտածուխ և այլն:[4]

1920թ. ամռանը Հայ հեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից բանակի օգտին ԱՄՆ-ում կազմակերպված հանգանակությունից հավաքվում է ավելի քան կես միլիոն ամերիկյան դոլլար, երևան է հասցվում մեծ քանակությամբ պաքսիմատ և պահածո:[5]

Ստեղծված բարդ իրավիճակը Հայաստանում խիստ բացասաբար էր անդրադառնում կառավարության ռազմաքաղաքական և տնտեսական գործունեության վրա, հնարավորություն չէր տալիս վերջինիս իր ձեռքում կենտրոնացնելու զգալի դրամական և նյութական ռեսուրսներ, լուծելու զանազան ռազմական խնդիրներ:

Հարկ է ընդգծել, որ հենց այդ դժվար կացության մեջ ստեղծվեց և զարգանում էր Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Ձախողման վտանգի տակ էին այն քաղաքական և տնտեսական ձեռնարկումները, որոնք, հույս կար իրականացնել Հայաստանում: Շատ շուտով ակընհայտ դարձավ, որ հայ ձեռներեցները, որոնք կարող էին քիչ թե շատ օգտակար լինել տնտեսության և առհասարակ հարազատ երկրի զարգացմանը, պարզապես չէին ցանկանում գալ Հայաստան որպես շարքային աշխատողներ. մեծամասամբ ձգտում էին հեղինակավոր բարձր պաշտոնների, ինչի մասին մենք շատ գունեղ վկայակոչության ենք հանդիպում Ս.Վրացյանի գրառումներում: Այսպես, վերջինս 1919թ. գրում է Արմեն Գարոյին. ,,Մեր մտավորականությունը դրսից է ուզում վայելել անկախ Հայաստանը: Միքայելին խնդրեցինք, որ գայ: Պատասխանեց, որ իր ներկայությունը անհրաժեշտ է Հռոմում: Անցնող օրը Խատիսյանը ասում էր, թե Ավետիքը իրեն գրել է, որ խաղաղության դաշնագրի ստորագրությունից հետո ինքը ցանկանում է դեսպան մնալ Փարիզում: Չնեղանաս, բայց դու էլ գերադասեցիր Վաշինգտոնը Երևանից: Եվ *մեզ նման ,,խուրտաներին,, մնաց Հայաստանի պետության կազմակերպելն ու վայելելը: Համաձայն եմ, որ այս մոմենտում դրսի աշխատանքը շատ կարևոր է, անհրաժեշտ է խաղաղության դաշնագիր կնքել իր բոլոր հետևանքներով, անհրաժեշտ է նյութական օժանդակության աղբյուրներ գտնել – համաձայն եմ, բայց այդ բոլորը շենքի վերին հարկերն են, եթե պատվանդանը ամուր չլինի, ձեր այդ միջազգային նվաճումները հինգ կոպեկի արժեք չեն ունենալ: Հիմքը պետությունն է և կառավարությունը,,*:[6] Փայլուն է ասված: Հստակորեն կարևորն ու պակաս կարևորն իրարից զատվել են:

Անշուշտ այստեղ կարևոր էր նաև այն հանգամանքը, որ արտերկրի հայ արտադրական մտավորականության ներկայացուցիչները բացասական ,,լիցքեր,, էին տեսնում Հայաստանում կառավարող դաշնակցական բյուրո-կառավարության գործունեության մեջ: Նրանք տընտեսական ձեռնարկումների ողջ հնարավորությունը տեսնում էին քաղաքական կայունության ապահովման մեջ, այն ինչ Հայաստանում իրապես չկար:

Դա, դեռ 1920թ. լավ էր նկատել նույնիսկ Անդրկովկասում, այնուհետև Հայաստանում ամերիկյան գերագույն կոմիսար Հասկելը: Ինչպես հաղորդում է Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցիչը 1920թ. փետրվարի 14-ի իր հաղորդման մեջ՝ ուղարկված արտաքին գործոց նախարարին, ,, մի անգամ գնդապետ Հասկելը, տեղեկանալով, որ Հայաստանի կառավարության յուրաքանչյուր բաժանմունք իր ներկայացուցիչն ունի Թիֆլիսում, ասել է, որ այդպիսի շքեղություն իրեն թույլ չի տալիս նույնիսկ Ամերիկան, որ մի քանի անգամ Հայաստանից հարուստ է,,:[7] Միանգամայն օրինաչափորեն ուժեղ, տնտեսական պետական և ղեկավար կազմ ձևավորել 1918-20թթ. չհաջողվեց, ձախողվեցին գործունյա պետական կազմակերպության ձևավորման բոլոր քիչ թե շատ լուրջ ջանքերը: Անշուշտ, այս առումով ճշմարտություն կա վերոհիշյալ գնդապետ Հասկելի՝ 1919թ. աշնանը Ե.Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ընթացքում ասված այն խոսքերում, թե այդ կառավարությունը ,,բաղկացած է նախկին դասատուներից և կուսակցության աջակցությունից օգտվող ամեն կարգի մարդկանցից՝ քաղաքականապես ոչ հասուն և ոչ հեռատես,,:[8]

Եվ առհասարակ Հայաստանում շատ անմխիթար էր կադրային վիճակը: Այդ հանգամանքը հասկանում էին նաև կառավարության, պետության և զանազան կուսակցությունների առավել խելացի ներկայացուցիչները, որոնք երբեմն-երբեմն վեհերոտ փորձեր էին կատարում շտկումներ մտցնելու այդ բնագավառում,սակայն ապարդյուն: Ոչ ոք չէր ցանկանում մեկնել անկայուն, թշնամիներով

շրջապատված Հայաստան, ուր ցուրտ էր, սով, խոլերա և տագնապով լի իրավիճակ:

Վրդովվելով ազգասիրության պակասից, հաճախակի ցուցաբերվող եսականության դրսևորումներից, Ս.Վրացյանը բողոքում է նաև մեկ այլ փաստի դեմ: Վկայակոչելով, որ Հայաստան եկողները քիչ չեն, նա միևնույն ժամանակ նշում է, որ մեծ ,,մասը գալիս է նախարար կամ խորհրդարանի անդամ և կամ դուրսը դեսպան նշանակվելու ակնկալիքով և հույսով,,:[9] Ավելին, զայրանալով, որ շատերն էլ Հայաստան են գալիս չարչիական - առևտրական նպատակներով, իբր թե հայրենի երկրին տնտեսապես օժանդակելու համար, Ս.Վրացյանը փաստագրում է, որ դա վերջին հաշվով ավարտվում էր նրանով, որ դրանցից շատերը զբաղվում էին էժան գներով գորգեր և թանկագին քարեր գնելու եկամտաբեր առուծախով՝ առանց փոխարենը Հայաստանում որևէ բան ներդնելու: Իսկ կառավարության արգելքի դեպքում էլ վերջիններս աղմուկ էին բարձրացնում, թե դաշնակցական սոցիալիստական կառավարությունը մեռցնում է ազատ առևտուրը:[10]

Հարկ է սակայն ընդգծել, որ հայկական ոչ բոլոր քաղաքական շրջանակներում էր իշխում ոգևորիչ (էյֆորիկ) հիացմունքը Եվրոպայից սպասվող ակնկալիքների նկատմամբ: Այլընտրանքի հնարավորությունները այնքան էլ մեծ չէին, մնում էր հավատալ, հույսեր տածել. սակայն ոչ բոլորն էին հավատում: Հետաքրքրական է այս առումով Թիֆլիսի հայկական դիվանագիտական ներկայացուցիչ Ե.Եվանգուլյանի 1919թ. դեկտեմբերի 9-ի արտաքին գործերի մինիստրի ներկայացված զեկուցագիրը. ,,Ես այլևս չեմ հավատում արտաքին ուժին ու նրա՝ դեպի մեզ բարելավ վերաբերմունքին. սպասելով անցյալ տարի Անգլիային, որպես մեր դաշնակցի, այս տարի Ամերիկային, որպես մեր հովանավորի, Ֆրանսիային նրա սիմպատիաներով դեպի մեզ, մենք սխալվել ենք մեր հաշիվներում: Ֆրանսիան գրավել է Կիլիկիան, Ամերիկան տատանվում է մեզ վրա մանդատ ստանձնել, Անգլիան մահմեդական տարրի մեծ տերություն է, Ռուսաստանը հեռու է, Իտալիային թույլ չի տվել Անդրկովկաս մտնել Անգլիան, իսկ հունական զորքերի Անդրկովկաս գալուն համաձայն չեն երևի դաշնակիցները: Այսպիսով, մեր ժողովուրդը մնացել է մեն ու մենակ առանց կողմնակի օգնության, շարունակվում է կոտորվել սովից, ցրտից, հիվանդություններից ու Տաճկաստանի մշտական սպառնալիքից,,:[11]Հայաստանի անկախության ընդունման փաստը մեծ ոգևորություն առաջ բերեց Հայաստանում: Սակայն ինչպես վկայում են փաստերը դա էլ բավարար զորեղ գործոն չէր, որ գործերը Հայաստանում դեպի լավը գնային, որ դրանից ոգևորվեին արտերկրի հայ գործարարները: Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 1919թ. սեպտեմբերի 28-ին, Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության խորհրդական իշխան Մ.Թումանյանի կողմից հրավիրված հայ արդյունաբերողների և բանկերի ներկայացուցիչների ժողովում, որին ներկա էր նաև գեներալ Հարբորդը: Ժողովի նախագահը հրավիրվածներին տեղեկացնում է գեներալին հետաքրքրող երկու հարցի մասին. 1/ Հայաստանի անկախությունը ճանաչելու դեպքում արդյունաբերության և բանկերի հայ ներկայացուցիչները կկամենա՞ն արդյոք իրենց գործունեությունը տեղափոխել Հայաստան և 2/ ի՞նչ պայմաններ են հարկավոր, որպեսզի արդյունաբերությունը Հայաստանում բարգավաճի:[12] Հարկ է նշել,որ Հարբորդը այդ նույն հարցերը տվել էր նաև Կ.Պոլսի հայ արդյունաբերողներին, որոնք պատրաստակամություն էին հայտնել կարգ ու կանոն հաստատվելուց հետո միայն տեղափոխվել Հայաստան: Այս առումով հատկանշական են Թիֆլիսի որոշ հայ մեծահարուստների ելույթները վերոհիշյալ ժողովում: Գործնական խոսքով հանդես է գալիս Եղյա Ղազարյան-Մայիլյանը: Շեշտելով, որ հայերը ոչ միայն առևտրական կարող են լինել, այլև լավ արդյունաբերողներ, նա այնուամենայնիվ պնդում է, որ բոլորն էլ իրենց գործերը Հայաստան կտեղափոխեն միայն այն դեպքում, եթե այնտեղ հաստատվի կարգ ու կանոն, և վերանան քաղաքական աննպաստ պայմանները: Գտնելով, որ ժամանակակից Հայաստանի արդյունաբերության զարգացման խոչընդոտները բազմաթիվ են, Ղազարյան-Մայիլյանը անդրադառնում է երկու կարևոր արգելքների. ,,նախ այն, որ Հայաստանը կտրված է արտաքին աշխարհից: Այս դրության հետ հայ արդյունաբերողը հաշտվել չի կարող: Առանց Վրաստանի հետ համաձայնության գալու Հայաստանը գոյություն ունենալ չի կարող. Վրաստանի տրամադրությունից է կախված Հայաստանի լինել-չլինելը: Այս կախումը Վրաստանից Հայաստանին դնում է ամենածանր վիճակում: Այժմյան Հայաստանում արդյունաբերության ոչ մի ճյուղ զարգանալ չի կարող, որովհետև դրա համար պահանջվում են արտադրական գործիքներ, որոնք Հայաստան մտցնելու համար հարկավոր է ստանալ Վրաստանի համաձայնությունը, այն Վրաստանը, որը մինչև իսկ

տրանզիտի պայմանագիր չի կամենում կնքել, *կապելով վերջինս տարածքային խնդիրների հետ, այսպիսով տալով այդ պայմանագրին քաղաքական բնավորություն,,.*[13]

Ի դեպ այս հանգամանքին անդրադառնում է նաև Հայաստանի վերջին վարչապետ Ս.Վրացյանը 1919թ. հունվարի 8-ի իր՝ Յ.Յոբոյանին հասցեագրված նամակում. ,,Վրացիները, օգտվելով իրեց աշխարհագրական դիրքից, փակել էին Հայաստանի ճամփան դրսի աշխարհի հետ՝ դատապարտելով հայերին սովամահութեան, ինչպես և ուզում էին գրավել անվիճելի հայկական գավառները՝ Ախալքալակը և Լոռին,,.[14] Ուրեմն, այս առումով տարբեր հեղինակներ, տարբեր դիրքորոշումների երկու մարդ, ինչպես տեսնում ենք, միակարծիք են:

Սակայն երկրորդ խոչընդոտը, որին անդրադառնում է հեղինակը, ներքին բնույթի էր, և ըստ իս շատ ավելի կարևոր, որովհետև դա արդեն կախված էր ,,հայ,, կոչված գործոնից: Հայ արդյունաբերող Ղազարյան-Մայիլյանը հենց այդ երկրորդ խոչընդոտը, որին հանդիպում էր արդյունաբերությունը Հայաստանում, համարում էր իրավակարգի, գույքի և անձի ապահովության բացակայությունը, ինչը զգալի չափով վերաբերում է նաև Հայաստանի երրորդ՝ ներկայիս հանրապետությանը: Վերոհիշյալ հեղինակը այդ համարում էր հետևանք այն բանի, որ կառավարությունը չէր արտահայտում ժողովրդի կամքը, որ ժողովուրդը ըստ ստեղծված իրավիճակի այնպիսի վիճակում էր, որ միայն իր ֆիզիկական գոյության փրկությամբ էր զբաղված, ուստի և հնարավորություն չուներ աչալուրջ վերաբերմունք ցույց տալու դեպի այս կամ այն ներքին քաղաքական խնդիրը:[15] Տեղին է ասել, որ նմանատիպ իրավիճակի հետ բախվեց հայ ժողովուրդը նաև 1990-ական թվականներին, որն էլ շատ բացասական ազդեցություն ունեցավ նրա քաղաքական և հասարակական ակտիվության, ինչպես նաև կենսամակարդակի վրա:

Եվ վերջապես, ամփոփելով իր միտքը, վերոհիշյալ հեղինակը գալիս է այն ճշմարիտ եզրահանգմանը, որ Հայաստանին հարկավոր է ոչ թե ,,կուսակցական կառավարություն, որ կուսակցական շարժառիթները նկատի ունենալով է այս կամ այն բնակավայրի վարչակազմը լրացնում, այլ զուտ ,,գործարար,, կաբինետ. Հայաստանը մտավոր կարող ուժերի կարիք ունի, որոնց հարկավոր է ներքաշել հասարակական և պետական շինարարության ասպարեզ, մինչդեռ իրակա-

նությունը գալիս է ասելու, որ մեր կառավարությունը զուտ կուսակցական մաշտաբներով է մոտենում այս կամ այն հարցին կամ պաշտոնին,,.[16]

Խիստ այժմեական և իրատեսական հարցադրումներ, որոնց հետ չհամաձայնվել չի կարելի : Շարունակելով իր միտքը՝ վերոհիշյալ հեղինակը պնդում է, որ ,,դաշնակցական լինելը մեր կառավարության համար առաջին պայման է այս կամ այն պաշտոն ստանձնելու համար: Այսպիսի պայմաններում ոչ մի արդյունաբերություն չի կարող զարգանալ Հայաստանում: Հայաստանին հարկավոր է չափավորական կառավարություն , որի մեջ պիտի մտնեն նաև արդյունաբերության ներկայացուցիչներ,,.[17] Իսկ մի այլ արդյունաբերող, շարունակելով վերոհիշյալ հեղինակի տեսակետը, գալիս է այն հետևության, որ ,,հայ արդյունաբերողները և մասնագետները իրենք չեն, որ փախչում են, այլ նրանց մեր կառավարությունն է փախցնում իր նեղ կուսակցական գործելակերպով,,.[18]

Հետաքրքիր է, որ այս փաստն արձանագրում է նաև գնդապետ Հասկելը, որը թվում է, թե Հայաստանի ներքին կյանքից չպետք է գլուխ հաներ: 1919թ. վերջին /նոյեմբեր-դեկտեմբեր/ Եվանգուլյանի հետ ունեցած զրույցի ժամանակ նա շեշտում է, որ չնայած ,,կառավարության ղեկավարը /խոսքը վերաբերվում է Ալ.Խատիսյանին/ ավելի խելացի է և բարձր է մնացած բոլորից, սակայն ամբողջությամբ գտնվում է կուսակցության ձեռքին և հարկադրված է իրագործել պառլամենտի և կուսակցության կողմից իրեն թելադրվող հրամանները,,.[19]

Սա փաստ է, որն անտեսել անիմաստ է, ընդհակառակը, որպես պատմական փաստ այն հարկավոր է մանրազնին ուսումնասիրել ու հաշվի առնել ներկա հասարակական-քաղաքական գործընթացում:

Ի վերջո Հայաստանում մնացին նրանք, ովքեր ցանկանում էին, և արեցին այն, ինչ իրենք ի վիճակի էին: Հայաստանում աշխատել ցանկացողների թիվը քիչ էր,զգալի մասը պարզապես չէր ցանկանում աշխատել Հայաստանում, այլ ձգտում էր իր համար ապահովել ,,օազիսային,, պայմաններ: Հայաստանում առաջացել էր կադրային դատարկություն. շատերը ձգտում էին մնալ արտասահմանում և չաշխատել Հայաստանի դժվարին պայմաններում, բայց փոխարենը մնացած տեղական իշխանավորներից պահանջում էին կայուն, հզոր պետություն՝ հզոր բանակով, գերազանց սպայական-հրամանատարական

կազմով, արհեստավարժ նախարարների կաբինետով՝ փոխարենը ոչինչ չառաջարկելով: Հայաստանում մնաց մարդկային այն նյութը,որը ցանկանում էր գեթ ինչ-որ բան տալ իր երկրին ու ժողովրդին:

.Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Պետական Կենտրոնական Պատմական Արխիվ / այսուհետև՝ ՀՀ ՊԿՊԱ/ , ֆ.276, g.1,գ.79,թ.13:
2. Տես՝ Ս.Վրացյան, Հին թղթեր նոր պատմության համար: Բեյրութ, 1962, էջ 287-288:
3. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.276,g.1,դ.79,թ.145:
4. Նույն տեղում, թ. 43:
5. Տես՝ Վրացյան Սիմոն, Հայաստանի հանրապետությունը.: Հայաստան,1993,էջ 450-451:
6. Տես Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմության համար, էջ 301:
7. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, g.1,գ.212,թ.23:
8. Նույն տեղում, գ. 183,թ.146:
9. Տես Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմության համար, էջ 301:
10. Տես՝ նույն տեղում, էջ 302:
11. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276, g.1,գ.116,թ.125:
12. Նույն տեղում, գ. 119, թ.167:
13. Նույն տեղում:
14. Տես Վրացյան Ս., Հին թղթեր նոր պատմության համար, էջ 275:
15. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 276,g.1,գ.119,թ.167:
16. Նույն տեղում, էջ 168:
17. Նույն տեղում:
18. Նույն տեղում:
19. Նույն տեղում, գ.183,թ.146:

2. Ընդհանուր ռազմաքաղաքական իրադրությունը 1918թ.: Հայ-վրացական պատերազմը և կուսակցությունների դիրքորոշումը

1918թ. դեկտեմբերին Լոռի-Փամբակի սահմանային վեճի պատճառով երկշաբաթյա ռազմական բախում տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների միջև: Դրա հետևանքով Հայկական Լոռին ճանաչվեց չեզոք գոտի մինչև հարցի վերջնական լուծումը, իսկ Ադրբեջանի հետ ռազմաքաղաքական առճակատումը ավելի երկար տևեց: Հայաստանում գործող բոլոր քաղաքական կուսակցությունները, բացի , գուցե, բոլշևիկներից, այսպես թե այնպես կանգնեցին ազգային անվտանգության և պետականության պաշտպանության դիրքերում:

Այստեղ մենք նպատակահարմար չենք գտնում անդրադառնալ պատերազմական անցուդարձին, դա հատուկ ուսումնասիրման առարկա է: Սակայն հարկ է ընդգծել, որ հայ-վրացական հարբերությունների կարգավորման, պատերազմական կնճռի հաղթահարման հարցը պառլամենտական բուռն քննարկման նյութ է հանդիսացել՝ առաջ բերելով իրարամերժ տեսակետներ: Մասնավորապես այն հանգամանալից քննարկման նյութ է դարձել ՀՀ խորհրդարանի 1918թ. հոկտեմբեր-դեկտեմբերի նիստերում: Առհասարակ Հայաստանի խորհրդի / պառլամենտի/ ֆրակցիաները, չնայած որոշ տարակարծություններին, միակարծիք էին հայ-վրացական 1918թ. պատերազմի նկատմամբ ունեցած իրենց դիրքորոշման մեջ:

1918թ. հոկտեմբերի 26-ի Հայաստանի խորհրդի նիստում, երբ քննարկվում է հայ-վրացական կոնֆլիկտի խնդիրը, ելույթ են ունենում տարբեր ֆրակցիաների ներկայացուցիչները՝ Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Եր.Հարությունյանը, սոցիալ-դեմոկրատ Հ.Ազատյանը և ուրիշներ:

Էականն այն է, որ որոշ տարակարծություններով հանդերձ, վերջ ի վերջո նրանք բոլորն էլ համերաշխվում են, և 27 ձայնով անցնում է Հ.Հ. Դաշնակցության բանաձևը, ուր ասվում էր հետևյալը .,, Հայ-վրացական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու նպատակով Հայաստանի խորհուրդը հանձնարարում է կառավարությանը բանակցություններ սկսել վրաց կառավարության հետ՝ կոնֆերանս գումարելու սահմանագիծն

որոշելու համար,,:[1] Պատգամավոր Հայկ Ազատյանի առաջարկով որոշվում է այդ մասին տեղեկացնել նաև Վրաստանի պառլամենտի նախագահությանը, որը ընդունվում է պայմանով, որ այն ունի ագիտացիայի բնույթ և նպատակ: Հետագա շրջանում հարցի քննարկումը, կապված հայ-վրացական կնճռի հաղթահարման հետ, շարունակվում է:

Ինչպես երևում է Հայաստանի հանրապետության պառլամենտի 1918թ. հոկտեմբերի 29-ի նիստի արձանագրությունից, կուսակցական ֆրակցիաները դարձյալ որոշակի վերաբերմունք ունեցան այդ խնդրին: Եթե սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան ի դեմս Ա.Խոնդկարյանի առաջարկում էր Վրաստանի հետ ունեցած վեճը լուծել խաղաղ ճանապարհով, ապա դաշնակցական ֆրակցիան և նույնիսկ մեծամասնական Ա.Մելիքյանը, հավանություն տալով կառավարության ձեռնարկած քայլերին, ամեն ջանք գործադրել խաղաղ ճանապարհով լուծելու սահմանավեճը, առաջարկում էին, անհրաժեշտության դեպքում, զենքի ուժով պաշտպանել Հայաստանի իրավունքները: Անցնում է, սակայն, դաշնակցական ֆրակցիայի առաջարկը:[2]

Հայ-վրացական պատերազմի, ռազմական գործողությունները դադարեցնելու և սահմանակնճիռը հարթելու նպատակով Լոռի մեկնեց խորհրդարանական հանձնաժողով, ուր ընդգրկված էին Գ.Տերխաչատրյանը/ՀԺԿ/,Մ.Հարությունյանը/ՀՀԴ/, Ս.Խաչատրյանը /ՀՀԴ/, Ա.Խոնդկարյանը /էսէռ/. Ա.Մամիկոնյանը /անկուս./ և զորավար Ղորղանյանը:[3] Բացի այդ, Հայ սոցիալ-դեմոկրատիան կոչով դիմեց Վրաստանի սոցիալ-դեմոկրատիային՝ հայ-վրացական միջադեպին վերջ տալու անհրաժեշտության մասին: Կոչը հասցեագրված էր սոցիալ-դեմոկրատիայի մարզային կոմիտեին, ազգային խորհրդի նախագահին և մինիստր-նախագահին:[4] Էական արդյունքներ սակայն, այն չտվեց:

Հայաստանի խորհրդի նոյեմբերի 8-ի նիստում քննվեց Վրաստանի վարչապետ Ռամիշվիլիի դիմումագիրը, և առաջին անգամ Հայաստանի հանրապետության կյանքում Խորհրդի բոլոր կուսակցությունները, առանց բացառության, կանգնեցին միևնույն տեսակետի վրա՝ ցասումով դատապարտելով Վրաստանի կառավարության մենատիրական ձգտումները: Եվ որ շատ ավելի կարևոր և հետաքրքրական է, ամենաուժգին քննադատողներն ու դատափետողները եղան հայ սոցիալ-դեմոկրատները, որոնք դեռ շարունակում էին կազմակերպական

կապեր պահպանել վրաց սոցիալ-դեմոկրատների հետ: Սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Ա.Մալխասյանը խիստ բողոքեց հայ-վրացական տարածքային սահմանավեճը հարթելու նպատակադրումով խորհրդաժողով հրավիրելու վրացական կողմի տարօրինակ ձևի դեմ / վրացական կողմը հաշվի չէր առել հակառակ կողմի ցանկությունները, նրա հետ հավասար դիրքերից հանդես գալու ելակետային պահանջները և այլն/, որն այս դեպքում համազոր էր բովանդակության. իր քայլով Վրաստանի ,,դեմոկրատական,, կառավարությունը խախտում էր հավասարության սկզբունքները, ցանկանում էր ուրիշների վզին փաթաթել իր կամքը: Վրաստանի կառավարությունը ինքնագլուխ կերպով՝ առանց դիմացինի կարծիքը հաշվի առնելու, որոշել էր վեհաժողովի վայրն ու ժամանակը, օրակարգն ու կազմը: Հայկական կողմը, քաղաքական կուսակցությունները անհանդուրժելի գտան նման վարքագիծը, և դատափետեցին այն: Անհանդուրժելի գտավ և ինչպես վկայում է Ս.Վրացյանը, ,,ըստ ձևի ու ըստ էության դեմ,, արտահայտվեց նաև սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան: Նմանատիպ պատճառաբանություններից ելնելով՝ բացասական վերաբերմունք դրսևորեցին և դաշնակցական, և ժողովրդական ֆրակցիաները: Եվ գրեթե միաձայն խորհրդարանը որոշեց չմասնակցել նոյեմբերի 10-ի խորհրդաժողովին և հանձնարարեց կառավարությանը,որ աշխատի ,,հող պատրաստել մասնակցելու խորհրդաժողովին՝ նախօրոք համաձայնության գալով նրա կազմի , օրակարգի, տեղի ու ժամանակի նկատմամբ,,: Միաժամանակ խորհուրդը որոշեց, որ հայ-վրացական սահմանային վեճը առնչություն չունի այդ խորհրդաժողովի հետ և ,,պետք է վճռվի միայն երկու հանրապետությունների ներկայացուցիչների միջոցով, փոխադարձ համաձայնությամբ,,:[5]

Ախալքալաքի ու Լոռիի դեպքերը մեծ հուզում առաջ բերեցին Երևանում: Քաղաքական կուսակցությունները, Հայաստանի խորհրդարանը, կառավարությունը, հանրային կարծիքը միաբերան դատապարտում էին վրացիների հակահայկական դիրքորոշումը: Հայաստանի խորհրդարանը մի շարք դռնփակ նիստերում քննելով դրությունը՝ կառավարությանը տվեց գործելու ազատություն՝ պարտավորեցնելով նրան դիմել ամեն միջոցի՝ պաշտպանելու համար Հայաստանի իրավունքը Ախալքալաքի, և մանավանդ, Լոռիի վերաբերմամբ: Այս հարցում տարակարծություն չկար. բոլոր կուսակցությունները Լոռին

համարում էին Հայաստանի անբաժանելի մաս: Հայ ժողովրդի բոլոր խավերի միտքն էր արտահայտում պատմաբան Լեոն, երբ սահմանավեճի առթիվ գրում էր. ,,Երկու հազար տարվա պատմությունը տանում հասցնում է այն եզրակացության, որ առանց Լոռու երկար դարաշրջաններում չէր կարելի երևակայել Հայաստան: Ներկայումս այս բանն ավելի ևս աներևակայելի պետք է համարել, քանի որ կտրել Լոռին Հայաստանի մարմնից կնշանակե հոշոտել նրա ամբողջ անցյալը և նրա կուլտուրական գանձերը՝ դարերի և հարյուրավոր սերունդների մեծագործությունը թալանել տալ,,:[6]

Հատկանշական է, որ հայ-վրացական վեճի առանցքը հանդիսացող տարածքների հայկական պատկանելության հարցում Հայաստանի կուսակցությունների և խորհրդարանական պատվիրակությունների գերակշռող մեծամասնությունը էական տարակարծություններ չունեին: Այս առումով հետաքրքրական է Հայաստանի խորհրդարանի 1918թ. դեկտեմբերի 12-ի նիստի ընթացքի ամբողջական վերլուծումը: Պատգամավորները լսում են մինիստր-նախագահի հաղորդագրությունը Լոռվա շրջանում վրաց զորքի և տեղական հայ ազգաբնակչության միջև սկսված ընդհարումների մասին: Լսվում է Լոռվա բնակչության դիմումի մասին Հայաստանի կառավարությանը, ընթերցվում է ուզունլարցիների դեկտեմբերի 7-ի դիմում-հեռագիրը: Կառավարությունը տեղեկացնում է ձեռնարկած միջոցների մասին:[7] Հարցի կապակցությամբ ելույթ են ունենում տարբեր խմբակցությունների ներկայացուցիչներ: Չնայած արտահայտման որոշ տարակարծություններին, հիմնականում կուսակցական խմբավորումները միակարծիք էին: Այսպես, Հայ Հեղափոխական Դաշնակցության ներկայացուցիչ Ն.Աղբալյանը ելույթ ունենալով ընդգծում է, որ հայկական ,, կառավարությունը պետք է լինի զգույշ, բայց և կտրուկ. Լոռին մերն է և ժողովուրդն իրավունք ունի ինքնորոշվելու, և պետք է նրա ձայնը որոշիչ լինի,, ,[8] քանի որ այդ բնակավայրերի ,,ազգաբնակչության 80 տոկոսը հայեր են,,:[9] Խորհրդարանի սոցիալ-դեմոկրատ պատգամավոր Աբրահամ Մալխասյանը, ըստ էության համերաշխվելով պատգամավոր Ն.Աղբալյանի և կառավարության տեսակետի հետ և ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքից՝ պնդում է հետևյալը .,,Մենք ընդունում ենք, որ Լոռին Հայաստանի հանրապետության տերիտորիայի մասն է կազմում,,: Շարունակելով իր տեսակետը, Ա.Մալխասյանը գալիս է այն եզրահանգմանը, որ ,,պետք է

երկու դեմոկրատիկ ժողովուրդների դեմոկրատիկ խորհուրդներից կազմել խառն հանձնաժողով,, ,որը և կորոշի պատերազմի ելքը, քանի որ իրենք ,,կատեգորիկ կերպով հակառակ են պատերազմին,, , և միակ ելքը համարում են արբիտրաժը, կազմելով խառն ադմինիստրացիա նշված տարածքները ղեկավարելու համար մինչև վերջնական որոշումը:[10]

Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչ Կոնստանդին Գյուլնազարյանը ևս իր եզրափակիչ խոսքում ընդգծելով, որ ,,Հայ ժողովրդական կուսակցությունը տրամադիր է այս հարցը միանգամայն խաղաղ ճանապարհով լուծիլ, բայց ոչ ծայրաստիճան զիջումներ անելով,, , որ ,,վրացիները պետք է իրենց զորքերը հանեն Լոռուց, որ հայ Լոռին պետք է կցել Հայաստանին: Վրաստանի հետ խաղաղ հարաբերությունների տեսակետից լավագույնն այն է, որ Լոռին կցվի Հայաստանին: Այդ նպատակով է ՀԺԿ-ն պառլամենտական ֆրակցիան գտնում է, որ միայն խաղաղ միջոցների սպառումից հետո պետք է տեղիք տալ զինված ընդհարմանը,,:[11]

Կարևոր է նաև ընդգծել,որ էական տարբերություններ չկային տարբեր խմբակցությունների բանաձևերում, որոնք մենք կշարադրենք ստորև, չնայած այն հանգամանքին, որ դրանք ձայների մեծամասնություն չստացան, և անցավ Հայ Հեղափոխական Դաշնակցության առաջարկը:[12] Խորհրդարանի սոցիալ-դեմոկրատները անում են հետևյալ առաջարկը, որն ստանում է կողմ՝ 6 ձայն. ,,Հայաստանի խորհուրդը լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դեպքերի մասին,որոշեց. 1.Վիճելի գավառները պատկանում են Հայաստանի հանրապետությանը. 2. Համարելով հայ-վրացական վեճի պատերազմով լուծելն անթույլատրելի,իսկ կոնֆերանսի միջոցով՝ անհնարին, ինչպես այդ ցույց տվեցին մինչև այժմ վարված բանակցությունները, միակ ելքը ընդունվում է արբիտրաժը. 3. Առաջարկում է վրաց կառավարությանը ցավալի դեպքերի զարգացման առաջն առնելու համար հետ քաշել զորքերը Լոռվա սահմաններից, խոստանալով, որ հայոց զորքերը չեն մտնիլ այս գավառն, սպասիլով անմիջապես կազմվող արբիտրաժի վճռին. 4.մինչև արբիտրաժի վճիռը՝ գավառում խառն հանձնաժողովի ձեռքով կազմել խառն ՝ադմինիստրացիա. 5. Բանակցությունները վարել ոչ թե կառավարության ներկայացուցիչների, այլ պառլամենտական հատուկ հանձնաժողովների միջոցով,որոնք երկու կողմերից էլ դիմում են դեպքերի

վայրը, և Վրաստանին արած այս բոլոր առաջարկություններն հայտնիլ ի գիտություն դաշնակից պետությունների ներկայացուցիչներին, խնդրելով նրանց գործադրել իրենց ազդեցությունը, այս հարցին խաղաղ լուծում տալու համար,,:[13]

Հայ ժողովրդական կուսակցության բանաձևը, որն աննշան թվով ձայներ է ստանում, արձանագրում էր հետևյալը. ,,Լսելով մինիստրնախագահի հաղորդագրությունը Լոռվա դեպքերի մասին,խորհուրդը որոշում է հավանություն տալ կառավարության ձեռնարկած բոլոր միջոցներին այդ միջադեպը հարթելու համար իրավունքի և արդարության հիմունքների վրա,,:[14] Վերջնական տարբերակում ՀԺԿ-ը վերջին բառերը հանում է բանաձևից: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև սոցիալիստ-հեղափոխականների բանաձևը.,, 1.Նկատելով, որ Լոռվա շրջանը հայկական է և դեմոկրատիայի սկզբունքները պահանջում են այդ հարցի լուծումը ազգագրական տեսակետով. 2.նկատելով, որ ուրիշ որևէ լուծում մշտական կերպարանք կտա հայ-վրացական արդի հարաբերությանը՝ ազգային հարց ստեղծելով ապագայի համար երկու ժողովուրդների միջև վնասիլով նրանց համերաշխությանը, սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիան առաջարկում է կառավարությանը բոլոր հնարավոր միջոցներով աշխատիլ խնդիրը լուծել խաղաղ ճանապարհով, հակառակ պարագային պաշտպանիլ հայ ժողովրդի շահերը այդ շրջանում,,: Բանաձևը քվեարկվում է և ստանում 5 ձայն կողմ:[15]

Վերջապես, պառլամենտի նիստում ընթերցվում է ՀՀ Դաշնակցության ֆրակցիայի բանաձևը. ,,Լսելով կառավարության զեկուցումը Լոռվա դրության և այն միջոցների մասին, որ նա ձեռք է առիլ այդ շրջանի հայ ժողովուրդը վրաց զորքերի դեմ պաշտպանիլու համար՝ Հայաստանի խորհուրդը հավանություն է տալիս կառավարության տեսակետին և ձեռնարկած միջոցներին,,:[16]

Ի մի բերելով վերը ասվածը, կարելի է գալ այն հետևության, որ էական տարակարծություններ ֆրակցիաների տեսակետում, կապված հայ-վրացական կնճռի հաղթահարման և այդ առումով կառավարության ու պետության ձեռնարկած ռազմաքաղաքական գործունեության հետ, չկար, և դա էր էականը: Այսինքն՝ ակնհայտ էր, որ այդ կուսակցությունների մեծամասնությունը, չնայած ծրագրային որոշ տարակարծություններին, ազգային կարևորագույն հիմնահարցերի լուծման

բնագավառում միակարծիք էին, և վեր էին կանգնած կուսակցական նեղ հարցադրումների ու նկատառումների շրջանակներից:

Այս բոլորը վերաբերում է 1918թ. դեկտեմբերի 12-ի նիստին, իսկ դեկտեմբերի 16-ի նիստում եղավ շարունակությունը, որտեղ խմբակցությունները դարձյալ փաստեցին իրենց զորակցությանը կառավարությանը: Այս պատմական վավերաթղթերի արժեքն անվիճարկելի է: Գեներալ Թոմփսոնի կողմից դեպի գործողությունների վայրն ուղարկված կապիտան Գրինի զինադադարի մասին միջնորդության, և արված առաջարկության վերաբերյալ կուսակցական խմբակցություններն անում են իրենց առաջարկները և դիտողությունները Ախալքալաքի և Բորչալուի գավառների պատկանելության, ժողովրդի՝ հարազատ բնակության վայրերը վերադարձի, երկաթուղային հաղորդակցության վերականգնման և պարենավորման ու տնտեսական այլ խնդիրների վերաբերյալ:

Սոցիալիստ հեղափոխական Ա.Խոնդկարյանը խորհրդարանի դեկտեմբերի 16-ի նիստում ունեցած ելույթում ընդգծում է, որ ,,Լոռին և Ախալքալաքը Հայաստանի անբաժան մասն են,, ,որ այն պաշտպանվել է սոցիալիստ-հեղափոխականների կոնֆերանսին, և ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակում ,,Հայաստանի խորհուրդը պետք է աշխատի առանց արյունահեղության, խաղաղ ճանապարհով լուծել ստեղծված անախորժությունը,,:[17] Վերջում նա ներկայացնում է իրենց ֆրակցիայի հետևյալ բանաձևը. ,,Հայաստանի խորհուրդը սկզբից կանգնած լինելով հայ-վրացական տարաձայնությունը խաղաղ կերպով լուծելու տեսակետի վրա, ընդառաջ է գնում այն առաջարկին, որ կապիտան Գրինը անում է Հայաստանի կառավարությանը ու գտնում է, որ առաջադրված կետերը կարող են ծառայել իբրև հիմք, որի շուրջը բանակցելով կարելի կլինի գալ ցանկալի համաձայնության և այդ պատճառով հրահանգում է ուղարկել Սանահին իր ներկայացուցիչներին՝ բանակցելու Վրաստանի ներկայացուցիչների հետ,,:[18] Սոցիալ-դեմոկրատ Հայկ Ազատյանը, ելույթ ունենալով, գտնում է, որ եթե իրենք հետևեն Ն.Աղբալյանի ճառին, ապա ըստ իր տեսակետի ոչ մի համաձայնություն չի կարող կայանալ հայերի և վրացիների միջև, ուստի և ինքը գտնում է, որ չպետք էր այնքան սպասել, որ անգլիացիները միջամտեին, քանի որ այսօր այդ երրորդ ուժի, ,,Անգլիայի միջամտությունը կարող է լավ լինել, բայց չէ որ վաղը մենք նորից

կռվելու ենք, որովհետև ամբողջովին շրջապատված ենք շովինիստներով,,: Պետք է խոստովանել,որ այս բառերում ճշմարտություն կար, և ուշագրավը դա է: Եվ այդ տեսանկյունից էլ ելնելով՝ Հայկ Ազատյանը ներկայացնում է սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի հետևյալ առաջարկը. ,,Լսելով կառավարության հայտարարությունը կապիտան Գրինի արած առաջարկների մասին, Հայաստանի խորհուրդը որոշում է ընդունել առաջարկած պայմանները և հանձնարարում է կառավարությանը ի կատար ածել դրանք, եթե այդ որոշումները կնդունվեն և վրաց կառավարության կողմից,,: Սակայն ի վերջո այս տեսակետները չեն անցնում, և այն բանից հետո,երբ սոցիալ դեմոկրատ Ազատյանը գտնում է, որ մյուս բանաձևերը չարժե քվեարկել, ձայների գերակշռող մեծամասնությամբ ընդունվում է Հ.Հ. Դաշնակցության ճշգրտված և բարելավված բանաձևը. ,,Լսելով կառավարության ձեռք արած միջոցները Ախալքալակի և Բորչալվի շրջաններից վրաց զորքերը հեռացնելու և Բորչալվի հայ ազգաբնակչությանը վրաց զորքերի բռնություններից ազատելու մասին՝ Խորհրդարանը հավանություն է տալիս կատարված քայլերին: Միշտ կողմնակից լինելով հայ-վրացական վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու և սկզբունքով համաձայն լինելով կապիտան Գրինի առաջարկին, Հայաստանի խորհրդարանը անհնարին է համարում մեր զորքերի հեռացումը, մինչև որ չերաշխավորվի Հայաստանի անվիճելի մասը կազմող Բորչալվի հայկական բաժնի և Ախալքալաքի գավառի ապահովությունը վրաց զորքերից: Խորհրդարանը հրահանգում է կառավարությանը այս հիմքերի վրա հատուկ պատվիրակության միջոցով բանակցություններ վարել կապիտան Գրինի հետ և եթե հարկ լինի՝ նաև Վրաստանի հետ,,: Բանաձևը 18 ձայնով ընդդեմ 4-ի ընդունվում է, 13-ը ձեռնպահ են մնում:[19]

Ակնհայտ է, որ կեղծ է այն մոտեցումը,երբ կուսակցությունները արհեստականորեն բաժանվում են ազգայինի և ոչ ազգայինի, հիմք ընդունելով ոչ իրական չափանիշներ: Արխիվային և այլ փաստաթղթերը անվիճելիորեն վկայում են,որ թե ընդդիմադիր, և թե մնացյալ կուսակցական խմբավորումներն ու կազմակերպությունները, ներքուստ ունենալով զանազան տեսակետներ, այնուամենայնիվ, ազգային տարածքային հարցերի լուծման խնդրում միասնական են եղել: Այլ բան է, որ գործնականում ներկայացվող առաջարկները իրագործելի լինեին,

բխեին գոյություն ունեցող իրավիճակի իրատեսական հաշվառումից: Նման հարցերը պարզաբանելիս պետք է նկատի ունենալ այն իրական աշխարհաքաղաքական իրավիճակը, որում գտնվում էին թե կուսակցությունները, և թե Հայաստանը ընդհանուր առմամբ, ինչպես նաև այն հնարավորությունները, որ կյանքում կարող էին գործադրել կուսակցություններից և խմբավորումներից յուրաքանչյուրը: Թե պատերազմի ընթացքին և թե մյուս մանրամասներին մենք չենք անդրադառնում, որովհետև դա հատուկ քննարկման նյութ է: Ընդամենը նպատակահարմար ենք գտնում նշել, որ հայ-վրացական պատերազմը, որին վրացական կողմից մասնակցել է 12 հազարանոց զորք[20], իսկ հայկական կողմից՝ կանոնավոր բանակի 6000 զինվոր և 2000 աշխարհազորային, և ընդ որում կողմերը կորցրել են զգալի թվով մարդիկ, 1919թ. սկզբին ավարտվում է խորհրդաժողովով, որը որոշում է հետպատերազմյան իրադրության խնդիրները: Այդ փաստն արձանագրվեց նաև Հայաստանի խորհրդի 1919թ. հունվարի 25-ի նիստում, որտեղ լսվեց կառավարության զեկուցումը, ընդունվեց համապատասխան որոշում: Տեղեկացվեց հայ-վրացական կոնֆերանսի կողմից ընդունված և կառավարության լիազոր-ներկայացուցիչների կողմից հաստատված զինադադարի պայմանների և Բորչալվի սահմանների, գերիների փոխանակման կարգի, երկաթուղային հաղորդակցության կազմակերպման և չեզոք գոտու ղեկավարման մասին: Հաստատագրվում է երկու երկրների միջև ժամանակավոր դիվանագիտական գործողությունների վերսկսման կարգը և հատուկ հարցերի գծով հարաբերությունների բնույթը: Այս հարցի կապակցությամբ բանավեճ չի ծավալվում, պարզապես կուսակցական խմբավորումները արձանագրում են իրողությունը և հավանություն տալիս կառավարության ռազմաքաղաքական գործունեությանը:[21] Հարցերի քննարկումը ավարտուն դարձնելու նպատակով, վերջապես, անհետաքրքիր չէ նշել միջազգային կազմակերպությունների վերաբերմունքը հայ-վրացական պատերազմի նկատմամբ: Այդ մասին արժանահիշատակ վկայակոչումներ ունի Ա.Ջամալյանը: Հայ-վրացական պատերազմի հաջորդ շաբաթներին՝ 1919թ. փետրվարին, Բեռնում տեղի է ունենում Երկրորդ Ինտերնացիոնալի խորհրդաժողովը: Գագաթաժողովին մասնակցած Հ.Դ.Դաշնակցության և վրաց սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչները /Ա.Չխենկելի և ուրիշներ/ համաձայնության են գալիս հայ-

վրացական տարածքավեճը դնելու խորհրդաժողովի քննությանը: Խորհրդաժողովը վճռում է, որ այդ սահմանավեճը պետք է լուծվի համաձայն ազգերի ինքնորոշման իրավունքի ճշգրիտ գործադրության: Վիճաբանող կողմերն իրենց պատրաստակամությունն են հայտնում ենթարկվելու այս պայմանին:[22]

Սակայն դա արմատական փոփոխություններ չմտցրեց ազգամիջյան փոխհարաբերություններում: Վրացիները շարունակեցին նախկին քաղաքականությունը հողային խնդրում: Խորհրդաժողովները մնացին թղթային մակարդակում: Այդ հարցով 1919թ. մայիսին Փարիզում զբաղվում է Երկրորդ Ինտերնացիոնալի գործադիր մարմինը, որին Վրաստանի սոցիալ-դեմոկրատները առաջարկում են տարածքավեճը լուծել ոչ թե հանրաքվեով, ինչպես իրենց իսկ համաձայնությամբ որոշել էր Բեռնի խորհրդաժողովը, այլ միջնորդ դատարանով: Սակայն դարձյալ ապարդյուն: Երկու ամիս անց Լյուցեռնի խորհրդաժողովը նորից քննարկում է այդ չարաբաստիկ հարցը: Այստեղ էլ որոշվում է, որ ինչպես բոլոր հողային վեճերը, այնպես էլ հայ-վրացական սահմանավեճը պետք է լուծվեն ժողովրդական հանրաքվեով՝ կազմակերպված Ազգերի Դաշնակցության կողմից և նրա անմիջական հակակշռով: Ի վերջո այդ ամենը ավարտվում է վերոհիշյալ հայ-վրացական խորհրդաժողովով 1919թ. օգոստոսի 29-30-ին Թիֆլիսում, և կնքված համաձայնությամբ , որով վիճելի հարցերի վերջնական հանգուցալուծումը հետաձգվում է մինչև ԹուրքաՀայաստանի հարցի լուծումը Ազգերի Դաշնակցության կողմից:

. *Օգտագործված գրականություն*

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.198,g.1, գ.15,թ.2,11,13:
2. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ.198,g.1,գ.16,թ.4: Տես նաև՝ ,,Զանգ,, թիվ 65, պ.3, հոկտեմբերի 27, 1918թ.:
3. Տես՝ ,,Ժողովուրդ,, , 22 դեկտեմբերի 1918թ.:
4. ՀՀ ՊԿՊԱ , ֆ.404,g.1,գ.5,թ.1:
5. Տես՝ Վրացյան Սիմոն. Հայաստանի հանրապետություն: Եր.. Հայաստան,1993, էջ 222:
6. Լեո, Սահմանավեճեր. 1919, Թիֆլիս, էջ 24:
7. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198,g.1, գ.15, թ.34-36, 36-39:
8. Նույն տեղում թ.40;
9. Նույն տեղում, թ,39;

10. Նույն տեղում, թ. 41;
11. Նույն տեղում;
12. Նույն տեղում, թ.45;
13. Նույն տեղում,թ.46;
14. Նույն տեղում,թ.45-46;
15. Նույն տեղում,թ.46;
16. Նույն տեղում;
17. Նույն տեղում,գ.17,թ.48-49;
18. Նույն տեղում,թ.49;
19. Նույն տեղում,թ.52;
20. Տես՝ ,,Կայծ,, , 22 հունվարի, 1979թ. թիվ22, Կարապետյան Մ.Լ. Հայաստանի հանրապետության բանակը /1919-1920/.- Եր.: ՀՀ/ԳԱԱ ,,Գիտություն,, հրատ., 1996, էջ 88:
21. ՀՀ ՊԿՊԱ, պ.198, g.1, գ. 15, թ.83-88;
22. Տես՝ Զամալյան Արշակ. Հայ-վրացական կնճիռը.- ,,Հայրենիք,, /հասարակական քաղաքական ամսագիր/.- 1928. թիվ 6, էջ 98:

3. Քանքեր հատուկ ծառայությունների ստեղծման ուղղությամբ.

Արժանի է ուշադրության մի շատ կարևոր հարց ևս :

Խոսքը վերաբերվում է Հայաստանի Առաջին Հանրապետության /1918թ. մայիս-1920 դեկտեմբերի 2/ հետախուզության և հակահետախուզության , հատուկ ծառայությունների աշխատանքի կազմակերպմանը: Այս թեման չափազանց անբավարար է ուսումնասիրված, և դեռ իր ուսումնասիրողներին է սպասում: Սակայն զգալիորեն դժվարանում է այն հանգամանքով, որ այս խնդրի վերաբերյալ շատ սուղ տվյալներ կան արխիվներում կամ գրեթե չկան: Հաճախ խաբուսիկ տպավորություն է ստեղծվում, թե այդպես էլ Առաջին Հանրապետությունը չի ունեցել ազգային անվտանգության այդ կարևորագույն կառույցները, կամ էլ ի վիճակի չի եղել ստեղծել դրանք: Սակայն նույնիսկ առկա սուղ փաստերը, որոնք մենք հայթհայթել ենք արխիվներում, հիմք են տալիս մեզ եզրակացնելու, որ դրանով զբաղվող մարդիկ եղել են, որ կառավարությունը փորձել է իր շատ համեստ բյուջեից գումարներ հատկացնել այդ գործի կազմակերպման համար, ուղիներ է որոնել:

Այսպես, դեռ 1918թ. օգոստոսի 13-ին Հայաստանի հանրապետության մինիստրների խորհուրդը լսում է ռազմական նախարարության իրեն միջոցներ բաց թողնելու միջնորդության մասին՝ ծածկելու համար ավիացիայի, հետախուզության և հակահետախուզության, ռադիոհեռագրի վրա ծախսված գումարները: Նախարարների խորհուրդը, քննարկելով հարցը, որոշում է կայացնում հավանություն տալ ծեռնարկված քայլերին, ինչպես նաև կառավարության վարկի հաշվին բաց թողնել 6 միլիոն ռուբլի՝ ա/ չնախատեսված ծախսերի համար հատկացնել 20 հազար ռուբլի, բ/ ինչպես նաև հետախուզության, և գ/հակահետախուզության համար գումարներ:[1] 1920թ. մայիսի 8-ին Հայաստանի առաջին հանրապետության նախարարների խորհուրդը, լսելով զինվորական նախարարի զեկուցումը արտասահմանի մեջ հետախուզական և հակահետախուզական գործի մասին, որոշում է կայացնում այդ գործունեությունը ենթարկել Հայաստանի հանրապետության դեսպանների հսկողությանը:[2]

1919թ. մարտին թվագրվող Թիֆլիսի Հայկական դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերից մեկում շարադրվում են

ռազմական գործակալների գործունեության ընդհանուր սկզբունքները, նրանց հետախուզության օբյեկտները և դիվանագիտական ներկայացուցչության հետ կապերի սկզբունքները որպես նրանց գործունեության պարտադիր պայմաններ, ինչի համար նախատեսվում էին չորս մարդ բարձր կոչումներով, իսկ երեք հոգի՝ ցածր սպայական կոչումներով:[3] Այդ նույն փաստաթղթում նշվում էր, որ Թիֆլիսում պահանջվում է գլխավոր շտաբի բարձր սպայական կոչում ունեցող սպա, որ ռազմական գծով պետք է լինի դիվանագիտական ներկայացուցչության կազմում, և փաստորեն անհրաժեշտ ռազմաքաղաքական ու հետախուզական տվյալները պետք է հավաքվեին և հաղորդվեին նրա միջոցով: Այդ գործի համար միակ հնարավոր թեկնածուն համարվում էր գեներալ Կորգանովը, որը փայլուն գիտեր ֆրանսերեն, անգլիացիներին գիտեր իր գործունեությունից Պարսկաստանում, որտեղ եղել էր գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսի շտաբի կազմում:[4]

Կարևոր է նաև կառավարության որոշումը սահմանապահ գնդերի կազմակերպման մասին, որի մասին զեկուցում լսվեց նախարարների խորհրդի 1920թ. հունիսի 14-ի նիստում, որի մասին տրվում են համապատասխան հանձնարարականներ:[5]

Հայաստանի հատուկ ծառայությունների պատմության ուսումնասիրման ուղղությամբ որոշակի շնորհակալ աշխատանք է կատարել պատմական գիտությունների թեկնածու Ա.Մանուկյանը: Նրա ուսումնասիրությունից ևս ակնհայտ են դառնում որոշ մանրամասներ, որոնք բացահայտում են այդ դժվար բնագավառի նվիրյալների գործունեությունը: Այսպես, հայտնի է, որ 1918-20թթ. Հայաստանի հանրապետության ռազմական նախարարության գլխավոր շտաբում գործել է հետախուզության բաժին՝ գլխավոր շտաբի գնդապետներ Զինկևիչի և Շնեուրի գլխավորությամբ: Վերջինս եղել է նաև Հայաստանի հանրապետության հակահետախուզության գլխավոր կազմակերպիչներից մեկը:Դրա աշխատակիցներից են եղել կադրային սպաներ՝ Վահան Գալուստի Մուրադյանը, որը գլխավորել է շտաբի հետա-խուզության բաժինը, ինչպես նաև Միքայել Նիկիտիչի Դոդոխյանը, Գրիգորի Իսահակի Խաչատրյանը և ուրիշներ: Ա.Մանուկյանի հոդվածից նաև պարզ է դառնում, որ հայկական բանակում գլխավոր շտաբի ստեղծման գաղափարի հեղինակը եղել է գնդապետ Զինկևիչը, որը

նպատակադրված էր ստեղծել կամավորական բանակի ինքնավար կառուցվածք: Պարզից պարզ է, որ Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունը ստեղծվել է ռազմական նախարարության կազմում, ինչը բնական է մի երկրի համար, որը գտնվել է մշտական պատերազմական վիճակի մեջ :[6] Արխիվային փաստաթղթերով հաս-տատվում է նաև այն փաստը, որը հակահետախուզությունն ուներ իր ներկայացուցիչները Հայաստանի տարբեր շրջաններում: Ավելին, հակահետախուզական մարմինները գործում էին նույնիսկ Լեռնային Հայաստանում /Զանգեզուրում/, որի ղեկավարը հայտնի Յապոնն էր /Արմենակ Պարոնյանը/: ՀՀ հետախուզական բաժինը զգալի աշխատանք էր իրականացնում արտասահմանում: Բաժինն իր գործունեության մեջ էր ներառել առաջին հերթին Անդրկովկասը, ինչպես նաև Ռուսաստանի հարավը և Յուսիսային Կովկասը: Աշխատանքն իրականացվում էր արտաքին գործոց նախարարության միջոցով, որն ինչպես նշվել է վերը, իր ներկայացուցիչներին կից ուներ հետախուզական ապարատ և ռեզիդենտուրա:

Ամբողջապես հետախուզական ապարատը ուսումնասիրում էր Հայաստանի քաղաքական դրությունը, իսկ մյուս կողմից, իր հաստատած ռեզիդենտների միջոցով, տեղեկություններ հաղորդում Անդրկովկասի հանրապետությունների մակարդակով, Դենիկինի կամավորական բանակի և Սովետական Ռուսաստանի, մասնավորապես Կարմիր բանակում իշխող իրավիճակի մասին: Այդ հետախուզական բաժինը անցկացնում էր նաև հետախուզական գործունեության ընդդեմ Թուրքիայի և Իրանի, կապված թուրքական բանակի վիճակի, նրա տեղադրության, թվաքանակի, պլանների և այլնի մասին:[7]

Հարկ է սակայն ընդգծել, որ հատուկ ծառայությունների թուլությունն արտահայտվեց նրանում, որ նրանք մասնավորապես 1920թ. աշնան թուրք-հայկական պատերազմի նախօրյակին, շատ աղոտ պատկերացումներ ունեին հենց այդ թուրքական բանակի թե թվաքանակի, թե պլանների և թե առհասարակ շատ հարցերի վերաբերյալ: Արդյունքն այն եղավ, որ չկարողացան պատնեշվել թուրքական զավթողական պլաններից, և արդյունավետորեն հակազդել Ք. Կարաբեքիրի հետախուզական մարմինների գործունեությանը: Այդ փաստը հաստատվում է թեկուզ նրանով, որ տարբեր հեղինակներ հակասական տվյալներ են բերում այդ ժամանակաշրջանի մասին, մասնավորապես

թուրքական բանակի թե ռեալ կազմի, և թե թվաքանակի մասին: ,,...տաճիկները լուռ ու անաղմուկ պատրաստվում էին Հայաստանի վրա արշավելու: Հայկական կառավարությունը շատ ուշ իմացավ նրանց այդ դիտավորության մասին,,[8] ,_ գրում է ժամանակակիցը՝ Յ.Իրազեկը:

Կա նաև հետաքրքրական մի փաստաթուղթ, որից ակնհայտ է դառնում, որ ռազմական նախարարությունը իր ուժերի և հնարավորությունների շրջանակներում զբաղվել է հետախուզական գործի կազմակերպմամբ, տարել է որոշակի գործնական աշխատանք: Ներքին գործերի մինիստրին հասցեագրված 1919թ. հունիսի 21-ի գրությունում գեներալ-լեյտենանտ Սիլիկյանը հաղորդում է, որ ստացված տեղեկությունների համաձայն Աջարիայից, Վրաստանից և Ադրբեջանից լրտեսական նպատակներով Հայաստան է ուղարկվել ագենտների մեծ թիվ, որոնք ցանկություն են ցուցաբերել ծառայության մտնելու զանազան մանր պաշտոններով Հայաստանում, օրինակ, բուֆետապաններ երկաթուղում և այլն: Այնուհետև ներքին գործերի մինիստրից խնդրվում էր հաղորդել, թե կան արդյոք այդպիսի անձնավորություններ, որոնք ցանկություն են դրսևորել որոշակիանալու ծառայության մեջ: Պահանջվում էր նրանց ազգանունները, և եթե նրանից ոմանք արդեն ընդունվել էին աշխատանքի, ապա դրանց անհապաղ հեռացման իրականացումը Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Երևանի շրջաններից,[9] մի խոսքով՝ սահմանային շրջաններից:

Սա ուշագրավ մի փաստաթուղթ է, որն ապացուցում է, որ չնայած հայ ժողովրդի և Հայաստանի հանրապետության ծննդի, գոյության ծանր ու անտանելի պայմաններին, 1918-20թթ. որոշակի քայլեր էին արվում ոչ միայն կազմակերպելու հատուկ ծառայություններ, հետախուզություն և հակահետախուզություն, այլև դրանք աշխատում էին՝ մեծ ճիգեր գործադրելով ապահովելու Հայաստանի ազգային-պետական անվտանգությունը:

- *Օգտագործված գրականություն*

1. ՀՀ ՊԿՊԱ, ֆ.201, ց. 1, գ.484, թ.9:
2. Նույն տեղում, գ. 489,թ.62,ֆ.278,ց.1, գ. 11,թ.16:
3. Նույն տեղում, ֆ.276,ց.է, գ.114,թ.10-12:
4. Նույն տեղում, թ.13:
5. Նույն տեղում, ֆ.201,ց.1,գ.491,թ.167:

6. Տես, ЕФ МНЮИ-XXI век(газета-журнал).- 1998. ном. 07-08. сентябрь-октябрь,с.9
7. Տես՝ Հայաստանի Հանրապետության Հասարակական և Քաղաքական Կազմակերպությունների Փաստաթղթերի Կենտրոնական Պետական Արխիվ / այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ/,ֆ.91,g.3,գ.3594,թ.2-20:
8. Տես Յ.Իրազեկ, Մօտիկ անցյալից: Պատմական դեպքեր և ապրումներ. 1917-1922. 1956, Տպ., Համազգայինի, Պէյրութ, էջ 67:
9. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201,g.1,գ.167,թ.147:

4.Միլիցիայի ստեղծումը. պայքար ներքին կարգ ու կանոնի համար

Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը հիշյալ ժամանակաշրջանում մեծ ջանքեր գործադրեց միլիցիայի և առհասարակ ներքին մարմինների ստեղծման ու դրանց աշխատանքի կազմակերպման ուղղությամբ: Այն բխում էր երկրում համապատասխան կարգ ու կանոնի հաստատման անհրաժեշտությունից: Եվ ինչպես վկայում է Հայաստանի 1918-20թթ. հանրապետության վերջին վարչապետ Ս.Վրացյանը, ,, Երկրի վարչությունը բարելավելու նպատակով, մայիսի 25-ին /1919թ./ Երևանում գումարվեց գավառապետների անդրանիկ համագումարը ներքին գործոց նախարարի օգնական Ս. Մանասյանի, նախագահությամբ: Ներկա՝ Երևանի գավառապետ Լ.Ամիրխանյանը էջմիածնի՝ Սեդրակ Ջալալյանը, Դարալյագյազի՝ Ն.Հակոբյանը, Նոր Բայազետի՝ Բենո Նալչաջյանը, Դիլիջանի՝ Մեսրոպ Սարատիկյանը, Ղարաքիլիսայի՝ Սիգո Տեր-Սարգսյանը, Ալեքսանդրապոլի՝ Թալանյանը, Կարսի նահանգից՝ Ստ. Ղորղանյանը, Զանգեզուրից՝ Նիկ. Հովսեփյանը, Սուրմալուից՝ Հ.Խորհրդի անդամ՝ Յուսուֆ Բեգ Թեմուրյանը /եզդի/: Համագումարին մեջ ընդ մեջ, մասնակցեցին նաև Հայ. Խորհրդի ու կառավարության անդամները, նախարարությանց ներկայացուցիչները և այլն: Օրակարգի մեջ դրված էին բազմաթիվ հարցեր: Ջուտ վարչաոստիկանական հարցերից հիշենք 1/երկրի վարչական սահմանների սրբագրության հարցը, 2/մասնագետ ոստիկանների պատրաստությունը և ոստիկանական դպրոցի բացումը, 3/պաշտոնեության ու ոստիկանության տնտեսական վիճակի բարելավումը, 4/ ոստիկանների համազգեստի խնդիրը,,[1] Եվ դարձյալ ըստ Ս.Վրացյանի փաստերի, այդ ամենի ոգեշնչողը, գլխավոր կազմակերպիչը հին հեղափոխական, պատասխանատու դերակատար ժողովրդական ինքնապաշտպանության կազմակերպության շրջանում՝ Ս. Մանասյանն էր,[2] որը ներքին գործոց նախարարության վարիչ եղած ժամանակ էլ դրսևորեց իր նախանձելի վարչական ընդունակությունները՝ ձեռնամուխ լինելով միլիցիայի /ոստիկանության/ համակարգի ստեղծմանը:

Միլիցիան ստեղծվում էր դժվարությամբ, դրա համար հատկացվող միջոցները հայթհայթվում էին մեծ զրկանքների գնով, և այնուամենայնիվ, իր բոլոր պրոբլեմներով հանդերձ, այն վատ-լավ կայացավ այն որակով, որքան հնարավորություն ընձեռեց այդ ժամանակաշրջանի

մարդկային հումքը: Արդեն 1918թ. օգոստոսի տվյալներով, ներքին գործերի նախարարության համակարգի Երևանի ջոկատում կար 17523 մարդ / ունեին ընդամենը 3570 ձի/, Դիլիջանի ջոկատում՝ 2861 մարդ/ 948 ձիով/, Ներքին Ախտայում՝ 2170 մարդ /512ձի/ և այլն, իսկ ընդհանուր առմամբ՝ 22555 մարդ՝ 5030 ձիով:[3]

Ներքին գործերի նախարարը որոշակի ջանքեր էր գործադրում կարգ ու կանոնի հաստատման ուղղությամբ, պետական, պաշտոնական և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարում, որին, որոշ վերապահումներով, աջակցում էին նաև քաղաքական կազմակերպությունները և կուսակցությունները: Մեծ չարիք էին այսպես կոչված ,,Խմբերը,, /մաուզերիստական/ իրենց գործողություններով: Մինիստրների խորհրդի 1919թ. հունվարի 21-ի նիստում լսվում է ներքին գործերի նախարարի պաշտոնակատար Ալ.Խատիսյանի զեկուցումը Դարալյագյազի, Երևանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառներում գոյություն ունեցող սանձարձակություններին ու ստեղծված անարխիային վերջ տալու համար այդ գավառներում ուժեղացված դրություն և գեներալ-նահանգապետություն հաստատելու, և զանազան ոճիրների համար մահվան պատիժ մտցնելու մասին: Մինիստրների խորհուրդը սկզբունքով ընդունում է գեներալ-նահանգապետություն հաստատելու մասին նախագիծը:[4]

Այդ դժվարին և խճճված ժամանակներում կառա-վարությունը և պետությունը ամեն ջանք գործադրում էին/ ինչքան որ մարդկային ռեսուրսները կարող էին թույլատրել, իսկ այս հանգամանքը հարկ է խոստովանել, շատ էական էր/, որպեսզի երկիրը՝ Հայաստանի հանրապետությունն ունենա ժամանակակից պահանջները բավարարող կարգ ու կանոն, այդ կարգ ու կանոնն իրականացնող անհրաժեշտ կառույցներ: Այդ ճանապարհին արվեցին դժվարին, երբեմն հուսահատ քայլեր այդ հաստատությունների ստեղծման ուղղությամբ: Բնականաբար, այդ կարգ ու կանոն ստեղծող կարևորագույն միջոցներից էր ներքին գործոց նախարարությունը՝ միլիցիայի և մյուս օղակներով հանդերձ: Իրավամբ ընբռնելով իրադրության լրջությունը, ներքին գործերի նախարարը 1920թ. հուլիսի 1-ի նախարարների խորհրդակցությունում ընդգծում է, որ հենց ներքին գործերի նախարարությունն է պետական իշխանության սյունը երկրում, և այն հենարանը, որին կռթնելու են մյուս նախարարությունները:[5] Սակայն հենց այդ նույն

խորհրդակցությունում միևնույն ժամանակ ընդգծվում է, որ այդ հենարանը վերին աստիճանի թույլ է, ուստի և մեր պետական ապարատն ամբողջությամբ թույլ է գործում: Իրավացիորեն գտնելով, որ այդ գործի կարգավորման բնագավառում կան օբյեկտիվ դժվարություններ, սակայն կան նաև խոչընդոտներ, որոնց հաղթահարումը կախված է կառավարության կամքից, իսկ ավելի պարզ ասած՝ կոնկրետ մարդկանցից: Ելույթ ունեցողը՝ Ներքին գործոց նախարարի օգնական Սահակ Թորոսյանը կարևորում է նոր օրենքի ստեղծման անհրաժեշտությունը հին ցարական ժամանակաշրջանի օրենքի փոխարեն: Այդ նպատակով էլ ստեղծվում է մի հատուկ հանձնաժողով նախարարության վարչական դեպարտամենտի տեսուչ Տրդ. Տրդատյանի գլխավորությամբ, որին ավաղ չի հաջողվում իրագործել այն, քանի որ գալիս են նոր ժամանակներ:

Մարդկային գործոնի կարևորության հարցը շեշտվում է նաև 1920թ. օգոստոս-նոյեմբերին թվագրվող ներքին գործոց նախարարի մի հաղորդագրության մեջ՝ կապված ՆԳՄ բաժինների կողմից քաղաքացիներից ստացված բազմաթիվ գրությունների ստացման հետ: Նրանում ասվում էր. ,, Համաձայնվելով միանգամայն, որ մեր մանուկ հանրապետության կարգերը դեռ շատ հեռու են կատարելատիպ լինելուց, որ պաշտօնյաները դեռ շատ անփորձ են իրենց ուսերի վրա դրած հայրենիքի հանդեպ պարտականությունների լրիվ և բավարար կատարելու համար, և որ ամենագլխավորն է, ըստ մեծամասամբ այդ պաշտօնեաները հավաքված լինելով պատահական անձնավորություններից, որոնց ոչ անցյալն է մեզ ծանօթ, և ոչ էլ ներկան, կարող են թույլ տալ կեղծիքներ, կաշառակերություն և մեծ ոճիրներ, մենք մեծ կարիք ունենք հասարակական գործակցության այդ պաշտօնյաների վրա կօնտրոլ սահմանելու, և մեղավորներին պատժի ենթարկելու համար,,.:[6]

Սակայն դժբախտաբար հասարակությունը այդքան ուժեր չուներ ներազդելու հակապետական, հանցավոր տարրերի վրա, և դրանք ծաղկում էին: Որոշակի խմբեր լավագույն սպառազինությամբ / ինչպես դա եղավ 1988թ.-ից հետո, արցախյան շարժման ժամանակաշրջանում/ զբաղված էին ահաբեկչությամբ, դրամաշորթությամբ և պարզապես կողոպուտով: Հատկապես դժվարին իրավիճակ էր ստեղծված Կարսի նահանգում: ՀՀ ՆԳ նախարարի օգնական Սահակ Թորոսյանը իր 1920թ. հուլիսի 2-ի զեկույցում նախարարների խորհրդում, վկայա-

կոչում է այն փաստը, որ օգտվելով հանրապետության համար ստեղծված խառնակ իրավիճակից, ,,խմբերը,, ահաբեկչությամբ էին զբաղված նաև այլազգիների, մասնավորապես Կարսի նահանգի ռուսական գյուղերի նկատմամբ,որոնց ներկայացուցիչները հունիսի 29-ին բողոքդիմումով գալիս են նախարարի օգնականի մոտ: Շիրակի նահանգապետը այս կապակցությամբ ևս իր բողոքն էր արտահայտում զինված անձանց կամայական ելույթներից:[7] Ի դեպ, այս կապակցությամբ ,,Անիշխանությունը Կարսում,, վերտառությամբ հոդված է տպագրվում սոցիալիստ-հեղափոխականների կողմից ,,Սոցիալիստ-հեղափոխական,, թերթում, որում անարգանքի սյունին են գամվում մաուզերիստական ,,խմբերը,, իրենց ծավալած անարգալից գործողությունների համար, և կառավարությանը, տեղական վարչակազմին կոչ էր արվում արմատախիլ անել այդ ավազակաորջերը:[8] Բարվոք չէր վիճակը նաև էջմիածնի գավառում, ուր նուխեցիների ավազակային գործողությունների հետևանքով, գնացքի վրա հարձակման հետևանքով սպանվում են 44 մարդ, իսկ 82-ը՝ վիրավորվում:[9] Այս կապակցությամբ ուշագրավ են նաև Ռնդամալ և Վերին-Ախտա գյուղերի բնակչության ներկայացուցիչների բողոքագրերը՝ ուղղված պառլամենտի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիային, որում դժգոհում էին կառավարության ներկայացուցիչների և զորամասերի, ինչպես նաև 400-ից ավելի գաղթականների կողմից իրենց ունեցվածքը թալանելու, գործադրված բռնությունների և այլ անկարգությունների վերաբերյալ, խնդրվում էր քննիչ հանձնաժողով ուղղարկել:[10] Դեռ ավելին: Դարաչիչագի տեղամասի Ռնդամալ գյուղի կոմիսար Սարգիս Երամովը պառլամենտի սոցիալդեմոկրատական խմբավորմանը հասցեագրված իր դիմում-բողոքագրում, վրդովվելով գյուղ ժամանած խմբապետ Մեսրոպի և նրա 300 զինվորների ապօրինի գործողություններից / գրելով, որ դա նկարագրել պարզապես հնարավոր չի/, մեղադրելով, որ այդ վախկոտ խմբապետները դեռ երեկ փախչում էին պատերազմի դաշտից նապաստակի նման, շատ խիզախաբար զբաղված են գյուղացուց նրա վերջին հացը, ալյուրը, հավը խլելով: Ավելին, գյուղական այս վերըհիշյալ կոմիսարը գրում էր,որ այն ինչ կատարվում էր Ռնդամալում, այն չի եղել և չէր էլ կարող անկասկած լինել ոչ միայն Ռոմանովների կամ Աբդուլ Համիդի ժամանակ այլև և Լենկ-Թեմուրի, որը չէր թույլատրում իր հորդաներին անել ինչ խելքներին փչի:

Վերջապես, ամփոփելով իր միտքը, նա շեշտում էր, որ Մեսրոպը և նրա կողմնակիցները պարզապես հարստանում են գյուղացիների հաշվին, և եթե կառավարությունը վճռական միջոցների չդիմի, ապա ,, *հասարակայնությունը վճռել է ընդունել մահմեդականություն և դառնալ Թուրքիայի հպատակներ, գոնե իրենց գոյությունը փրկելու համար, և լիազորել է... դիմել թուրքական ներկայացուցիչին,,*:[11]

Ակնհայտ է դառնում, որ այսպես կոչված ,,խմբերն,, այդ ժամանակ պարզապես չարիք էին պետության և հասարակայնության համար, իսկ պայքար դրանց դեմ տարվում էր այնքանով, ինչքանով որ դա հաջողվում էր: Կուսակցությունները ևս վատ-լավ բողոքում էին ստեղծված իրավիճակից: Այդ մասին շեշտում է Հայ ժողովրդական կուսակցության պառլամենտական ֆրակցիայի ներկայացուցիչ Երվ. Հարությունյանը 1919թ. հունվարի 15-ին մինիստրների խորհրդի նիստում պարենավորման մասին հարցի շուրջ ծավալված բանավեճի ժամանակ. ,,... միևնույն ժամանակ մենք պետք է ստեղծենք մեր ներքին կյանքում իրավակարգ, վերացնենք խմբերը, որոնք երկրի ներսում մի երրորդ իշխանություն են հաստատել,,:[12] Այդ միտքն է հաստատում նաև վերոհիշյալ նիստում ելույթ ունեցած Ա.Վրացյանը.,,... լիազորները կատարյալ զեղծարարներ էին... ասում էին, որ դրանք բավականին ցորեն, բամբակ ին գնիլ, այն ինչ ոչինչ չեն տեղափոխիլ մինչև հիմա Երևան... միջոցներից մեկը / պարենային խնդրի լուծման-ընդգծումը մերն է/ ներքին շուկայի օգտագործումն է, բայց դժբախտաբար ներքին օրգանները այնպես չին կազմված, որպեսզի օգտագործին...,,[13] այդ հնարավորությունները:

Անշուշտ, հետաքրքիր է ասել, որ փորձեր արվում էին իմաստավորելու այդ ժամանակաշրջանի խնդիրները, ուրվագծվում էին քայլեր այդ դժվարություններից երկիրը դուրս բերելու համար: Ներքին գործերի մինիստրը ելույթ ունենալով մինիստրների խորհրդի 1919թ. փետրվարի 11-ի նիստում, փորձելով վերհանել ներքին դժվարությունների իրական պատճառները և արմատները, հետևյալն է արձանագրում. ,,... որ ներկա անկարգությունները ժամանակավոր բնույթ են կրում և անցողական ին: Դրանք գլխավորապես պայմանավորվում են սովով... բնակչության մի մասը հանգիստ կերպով մեռնում է, իսկ մյուս՝ ավելի անհանգիստ մասը անկարգություն է անում: Վերջինս խոշոր չափերի է հասնում բնականաբար գաղթականների մոտ...

Գլխավորապես սովով է պայմանավորվում նա զինվորների անկարգությունը: Այստեղ ամենից առաջ պիտի հիշել զանազան խմբերին: Ես հրահանգիլ իմ դրանց ցրիլ...,,:[14]

Իսկ ամենավատթար վիճակը ստեղծվել էր Զանգիբասարի շրջանում, որը պարզապես ավազակային խմբերի մրցատեղի էր, իսկ մարդկանց մոտ ամրապնդվել էր անպատժելիության զգացումը: Իսկ այդ ամենին Հայաստանի ներքին գործերի նախարարությունը ռեալ հակադրելու ոչինչ չուներ: Ինչպես վկայակոչում է ներքին գործոց նախարարի օգնականը, միլիցիոներների թիվը թղթի վրա հասնում էր 5000-ի, իսկ նախահաշիվներում, կյանքում այդ թվի կեսն էլ չկար:Դա բացատրվում էր նրանով,որ պետության տկարության, ֆինանսական անկարողության հետևանքով շատերը պարզապես չէին էլ ցանկանում միլիցիոներ դառնալ, աշխատավարձը մինչև 1920թ. ապրիլի 1-ը հասնում էր ընդամենը 2500ռ., իսկ դրանից հետո էլ՝ 5000ռ.: Միլիցիոներն իրեն ապահով չէր զգում, իսկ առավել ակտիվները դրանցից հենց իրենք էին զբաղվում ալան-թալանով, աջակցում էին և հանցակից էին գողերին:[15]

Բացի այն հանգամանքից,որ պետությունը ի վիճակի չէր լավ զինել և ֆինանսավորել միլիցիային, կար ներքին գործերի աշխատանքին խանգարող ևս մի կարևոր հանգամանք: Այդ ժամանակաշրջանում ներքին գործերի նախարարության մարմինների աշխատանքին, երկրում կարգ ու կանոնի հաստատմանը էականորեն խոչընդոտում էր նաև այն հատուկ լիազորների համակարգը, որոնք ողջ հանրապետությունում քիթները խոթում էին իրենց չվերաբերող գործերի մեջ, զբաղվում էին մարդկանց բանտարկության և ազատ արձակման գործերով: Վերջին հաշվով, դա բարոյալքում էր միլիցիայի համակարգը, վարկաբեկում միլիցիոների բարոյական դիմագիծը:

Կար ևս մի գործոն, որը ևս զգալի չափով խոչընդոտում էր միլիցիայի բնականոն աշխատանքին, որից և բողոքում էին առավել ձեռնհաս պաշտոնյաները: Խոսքը վերաբերում է այն հանգամանքին, որ նշված ժամանակաշրջանում ներքին գործերի նախարարությունը հաճախ անհիմն կերպով համալրվում էր՝ ելակետ ունենալով կուսակցական պատկանելությունը: Սա վտանգավոր և անհեռատես մոտեցում էր խնդրին, և կյանքում այն ունենում էր անցանկալի, աղետալի հետևանքներ:

Հաջորդ պատճառը, որը խոչընդոտում էր երկրում ներքին կարգ ու կանոնի հաստատմանը, այդ ուղղությամբ միլիցիայի աշխատանքին, դա երկրով մեկ սփռված /արդեն վերը հիշատակված/ այսպես կոչված ,,խմբերի,, առկայությունն էր, որոնք ոչ մի իշխանություն չէին ճանաչում և օգտվում էին ամենաթողությամբ, իսկ դա վերջին հաշվով հայկական պետականության թուլության, անկամության կարևորագույն պատճառներից էր: Այդ մասին են վկայում բազմաթիվ փաստաթղթեր: Ինչպես երևում է մասնավորապես արդարադատության և ներքին գործոց նախարարությունների միջև 1918թ. վերջին նամակագրությունից, և միմյանց ուղղված պաշտոնական գրություններից, պահանջվում էր ,, միջոցներ ձեռք առնել նրանց կողմից ոչ օրինական գործողությունների չթույլատրության և դրանցից յուրաքանչյուրի դեպքում քրեական գործի հարուցման մասին,, , որոնք կամայականորեն զբաղվում էին ,,ձիերի, ֆուրաժի և սննդեղենի,, անհարկի բռնագրավումներով,,:[16]

Ինչպես նշվում է արևմտահայ գաղթականության ներկայացուցիչների բողոքագրում՝ ուղղված պառլամենտի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիային, ,,ոստիկանությունը դժբախտաբար չի գտնվեր իր կոչման բարձրության վրա և շատ անգամ ինքն ևս նույն անարխիան սաստկացնելու դերին մեջ կը գտնվի,,:[17] Բողոքագրում արձանագրվում էր պետական ապարատի սանձարձակ կամայականությունների ու երկրում տիրող ոստիկանական ռեժիմի մասին, մայրաքաղաքում տարածված գողությունների և ավազակությունների, անիշխանական վիճակի մասին:

Մի այլ օրինակ ևս: Երևանի շրջանային դատախազ Մալխազյանը իր զեկուցագրում՝ հասցեագրված արդարադատության նախարարությանը, գրում էր, որ ոստիկանության աշխատանքը շատ թերի կողմեր ունի, որովհետև ,, միլիցիայի կազմը պատահական է, նրա պաշտոնատարները կանգնած չեն իրենց կոչման բարձրության վրա,,[18] և գալիս այն արդարացի եզրակացությանը, որ ,,ոչ մի հիշատակություն կուսակցական գործունեության մասին՝ չպետք է առիթ ծառայի, որ մարդասպանության / ոչ քաղաքական/ և հափշտակության համար դատապարտվածն ազատվի պատժից,,:[19]Դատախազը մի կարևոր նկատառում էլ է արտահայտում, կապված այն հանգամանքի հետ, որ որոշ բանտարկյալներ, շահարկելով բանակի հարցը, այն օգտագործում էին պատժից ազատվելու համար. *,, Բանտում պատիժը կրելու փոխանակ՝*

բանակի շարքերում ծառայելու ցանկությունը, որ հաճախ հայտնում են պատժապարտները, չի կարող հարգվել, քանի որ զորաբանակը հասարակության տականքների տեղը չի: Եվ քրեական գործերով դատապարտվածների ամեն մի դիմումը պարլամենտին՝ ներում խնդրելու համար ոչ միայն անցանկալի է, այլ ուղղակի՝ անթույլատրելի,,.[20]/Ընդգծումը մերն է-Վ.Վ./: Միանգամայն արդարացի գնահատական, որ զուրկ չէ հիմքերից և փաստարկվածությունից:

Առաջին հանրապետության միլիցիայի /ոստիկանության/ համակարգը ստեղծվում էր երկունքի ծանր ցավերով և կրում իր վրա ճակատագրի այն բոլոր հարվածները, որոնք պատմության զարգացման անկասելի և անողոք ներքին տրամաբանությամբ պարտադրվում էին նրան:

.Օգտագործած գրականություն

1.Վրացյան Սիմոն, Հայաստանի հանրապետություն:Եր.: Հայաստան , 1993, էջ 372:
2.Նույն տեղում:
3.ՀՀ ՊԿՊԱ,ֆ.201,g.1,գ.38, մաս 1-ին,թ.6:
4.Նույն տեղում, գ.486,մաս 1-ին, թ.20:
5.Նույն տեղում, գ.287,թ.4:
6.Նույն տեղում, գ.280,թ.6:
7.Նույն տեղում, գ.287,թ.4:
8.Նույն տեղում, գ.300,թ.109-110: Տես նաև՝ ,,Սոցիալիստ հեղափոխական,, թիվ 30,29 հոկտեմբերի, 1919թ.:
9.ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201, g.1, գ.287,թ.4:
10.Նույն տեղում, ֆ.404,g.1,գ.27,թ.1-3:
11.Նույն տեղում, գ.17,թ.9-10:
12.Նույն տեղում,ֆ.198,g.1,գ.15,թ.92:
13.Նույն տեղում,թ.93:
14.Նույն տեղում,թ.135:
15.Նույն տեղում,ֆ.201, g.1,գ. 287,թ.5:
16.Նույն տեղում,գ.504, թ.4-5:
17.Նույն տեղում,ֆ.404, g.1,գ.18,թ.1:
18.Նույն տեղում,ֆ.198, g.1,գ.56,թ.3-4:
19. Նույն տեղում,4:
20.Նույն տեղում:

5. Կուսակցությունների դիրքորոշումը բանակի և պատերազմի, ռազմական քաղաքականության հարցերում

Հայկական բանակը ստեղծվում էր աննկարագրելի ծանր պայմաններում՝ ուղեկցվելով երկունքի ծանր ցավերով: Հայաստանի անկախության հաստատման պահին զորքը կազմված էր առանձին Հայկական կորպուսից և կորպուսի իրավունքներ ունեցող Հատուկ ջոկատից: Ինչպես կորպուսը, այնպես էլ ջոկատը Անդրկովկասի փլուզմամբ դուրս եկան Կովկասյան բանակի հրամանատարության ենթակայությունից, և դարձան ինքնուրույն միավորներ, ընդ որում ղեկավարությունն անցավ կորպուսի հրամանատարին, որը գործում էր Ազգային ժողովի համաձայնությամբ, որը կառավարության դեր էր կատարում: Սակայն, ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը, թուրքերի 1918թ. մայիսի 15-ին Ալեքսանդրապոլի վրա ուխտադրուժ հարձակումից և Ղարաքիլիսայի ու Սարդարապատի մատույցներում մղված ճակատամարտերից հետո, զորքերի մեծ մասը հայտնվեց անմխիթար վիճակում, ինչպես ընդհանուր վիճակի, այնպես էլ մատակարարման առումով, քանի որ բոլոր պահեստները մնացին թուրքերի ձեռքին: Շատ զորամասեր չունեին մարդիկ և գույք, որոշ մասը նահանջելու հնարավորություն չունեցավ և կորպուսի հետ միասին ետ քաշվեցին դեպի Թիֆլիս, ուր և հավաքվեցին նրանց մնացորդները:[1]

Ռազմական նախարարության կազմավորումը սկսվեց 1918թ.հունիսի 15-ին, և միայն դրանից հետո որոշ ռազմաքաղաքական պատկերացումների իրականացումը սկսեց միս ու արյուն դառնալ:

Ռազմական մի տեղեկագրի համաձայն, զինվորական ծառայության մեջ գտնվողների թիվը 1919թ. գարնանը մինչև 16 հազար մարդ էր կազմում,[2] իսկ դաշնակցական կառավարության նախագահներից մեկի՝ Հովհ. Քաջազնունու հուշագրի տվյալներով, որը ներկայացվել էր եվրոպական տերությունների ուշադրությանը, 1920թ. հուլիսի վերջերին զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 18 հազար մարդու: Այնտեղ նշվում էր զորքի, հագուստեղենի և այլնի պակասության մասին:[3]

Անհրաժեշտ է համադրել մի շարք տվյալներ՝ պարզելու համար իրերի իրական պատկերը, լեգենդն ու ճշմարտությունը:

Կ.Սասունու տվյալներով 1920թ. հայ-թուրքական պատերազմի նախօրյակին հայկական բանակի թվակազմը հասնում էր 35 հազար մարդու,[4] իսկ 1920թ. նոյեմբերի վերջերին զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի ներկայացրած մի տեղեկագրի համաձայն հայկական բանակի զինվորների և սպաների քանակը՝ օժանդական կազմով հանդերձ հասնում էր 34 հազարի, իսկ խմբերի հետ միասին՝ 40 հազարի:[5] Տեղին է նշել, որ ՀՀ Գիտությունների Ակադեմիայի կողմից իր ժամանակին հրատարակված 8-հատորյակի 7-րդ հատորում բերվում է տվյալ 40 հազարանոց բանակի մասին, որն իբր թե եղել է 1920թ.:[6] Վերջապես մի տվյալ ևս հարկ է մեջբերել, որից հետո կանցնենք եզրահանգումների: Հայաստանի պառլամենտի անդամ Հակոբ Տեր-Հակոբյանի տվյալներով Հայաստանի բանակի ընդհանուր թիվը 1920թ. հոկտեմբերին հասնում էր 55 հազարի:[7] Հենց այսպես: Իսկ հիմա ըստ էության: Փաստերի խոր վերլուծությունը ցույց է տալիս,որ այս թվական տվյալների մի մասը, որ բերվում է ժամանակակիցների և ոչ ժամանակակիցների կողմից, ըստ էության անիրական է: Այս ուռճացված թվական տվյալները առավել ևս անընդունելի են, երբ ակնհայտ է դառնում, որ այդ ահռելի հայկական բանակը գրեթե առանց լուրջ դիմադրության պարտություն է կրել 1920թ. պատերազմում իրեն գրեթե ոչնչով, կարծես թե, էապես չգերազանցող թուրքական բանակից, իսկ դա նսեմացնում է մեր ժողովրդի իրական արժանիքները, նրա հերոսական պատմությունը: 40-50 հազարանոց բանակի մասին լեգենդը չափազանց վտանգավոր լեգենդ է, որն արջի ծառայություն է մատուցել մեզ: Որ 16-18 հազարանոց բանակի մասին թվական տվյալն ավելի իրական է, մեկ անգամ ևս Ս.Վրացյանը հաստատում է Հ.Յ.Դ.Ամերիկայի Կենտրոնական Կոմիտեին 1919թ. մայիսի 18-ին հասցեագրված իր երևանյան նամակում, *որ մոտ 16-17 հազարանոց բանակը կարգապահ է և քաջ: Այնուհետև նա ավելացնում է, որ աշխատել են ստեղծել նոր զորամասեր* /հենց սա կարելի է տեղավորել 40-50 հազարանոց բանակի ստեղծման երազանքի ու գոյություն ունեցած լինելու պատկերացումների անիրական շրջանակներում /ընդգծումը մերն է- Վ.Վ./, եղածը ստվարացնել:[8] Սակայն միանգամայն այլ բան է պնդել, որ ինչպես նշվում է մի արխիվային փաստաթղթում, նորին մեծության

,,բրիտանական կառավարությունը,, ապահովվել է հայկական բանակին՝ 40 հազարանոց զինվորության համար նախատեսված զենքով ու զինամթերքով:[9] Մատնանշելով այս և այլ նմանատիպ փաստեր, հեղինակները միշտ ,,մոռանում են,, նշել,որ դրանք հաճախ թղթային տվյալներ էին, և որ դրանք բոլորը հավաստիացումների և խոստումների մակարդակով պետք է ընկալել, ասենք մոտավորապես այսպես. ,,այդ զենք ու հանդերձանքը հասել է Փոթի և դրա մի մասն արդեն Երևանում է ,,:

Այնուամենայնիվ, վատ-լավ հայկական այդ բանակը կար, և այն աշխատում էր նմանվել բանակի, ստեղծելով համապատասխան կառույցները, ձեռք բերելով զենք ու հանդերձանք, հայթհայթելով սննդեղեն և այլն: 1920թ. հուլիսին վերաբերող մի տեղեկագրում նշվում է հետևյալը. ,, Հարավային Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարությունը տրամադրել է մեզ 3000000 փամփուշտ: Կառավարությունն այդ փամփուշտների կեսը զիջել է Վրաստանին, մնացածը / մեկ ու կես միլիոն/ ամսոյ սկզբին ստացել է Երևանը:

Ամսոյ 3-ին Փոթի է հասել անգլիական նավով հետևյալ զենք ու ռազմամթերքը 25000 /քսանհինգ հազար/ Ռոշ սիստեմի հրացան, չորս հարյուր /400/ Թեթև մաքսիմ սիստեմի գնդացիր, 58000000 /հիսունութ միլիոն/ Վիկկեր սիստեմի փամփուշտ, 80 /ութսուն/ բիսկվիթ, 40000 /քառասուն հազար/ համազգեստ, /վերարկու,գլխարկ,կոշիկ և այլն/, 500 / հինգ հարյուր/ հատ հեռադիտակ, մեծ քանակությամբ դեղորայք և անդամահատության գործիքներ: Այդ ռազմամթերքի մի մասը արդեն տարվել է Երևան:

Վրաստանի Յունաց դիվանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում հայտնել է Բեգզադյանին, որ Յունաստանի կառավարությունը պատրաստ է, ձրիաբար բաց թողնել Հայաստանին 10000 /տասը հազար/ Գրա սիստեմի հրացան. 400 /չորս հարյուր/ փամփուշտ ամեն մի հրացանի վրայ, պայմանով, որ մեր կառավարությունը համաձայնվի՝ ստանձնելով այդ զենքը Պիրեյով տեղափոխելու բոլոր ծախսերը:[10] Եվս մի օրինակ: 1920թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածում Մեծ Բրիտանիայից ստացվել և հայկական բանակին էր հատկացվել 29 հազար լրակազմ հագուստեղեն / վերարկուներ, բաճկոններ, գլխարկներ, կոշիկներ/ և զինասարք / փամփշտակալներ, գոտիներ, ջրամաններ և այլն/ [11], ինչպես նաև 25 հազար միավոր

հրազեն:[12] Հայաստանի վարչապետ Ալ.Խատիսյանի վկայությամբ զենքով և հանդերձանքով հայկական բանակին Անգլիայի ցուցաբերած օգնության ընդհանուր գումարը կազմել է 1920թ. 1200 հազար անգլիական ֆունտ ստեռլինգ:[13]

Որոշակի քայլեր արվեցին նույնիսկ օդուժի կազմակերպման ուղղությամբ, որն այդ ժամանակ ողջ աշխարհում առաջին քայլերն էր անում: 1919թ. մարտի 1-ին Մինիստրների խորհրդի նիստում լսվեց զինվորական նախարարի զեկուցումը օդագնաց ատրեադի /ջոկատի/ շտատը կրճատելու, ֆրանսիական հրահանգիչներ հրավիրելու և 20-25 զինվորականների օդագնացության արվեստը սովորեցնելու համար Ֆրանսիա ուղարկելու մասին: Նիստում հավանություն է տրվում զինվորական նախարարի առաջարկին, որի համար նրան երաշխավորում են վարել այդ առթիվ հարկավոր բանակցությունները:[14]

Սակայն բանակի ստեղծումը դժվարին գործ էր, և արդյունքներն էլ գոհացուցիչ չէին: Ա.Խատիսյանը, Լեոյին ուղղված իր նամակներից մեկում /14մարտի,1919թ./ պատմելով նախօրյակին կայացած կառավարության նիստի մասին, որին մասնակցել են բանակի գլխավոր պաշտոնյաները / գեներալ Սիլիկյանը, գեներալ Չումարովը, երևանյան ջոկատի հրամանատար Դրոն և ուրիշներ/, այնուամենայնիվ ընդգծում է բանակի անմխիթար վիճակի մասին: Նա գրում է,որ զինվորները սոված և գզզված են, 4 ամսից ավել լողացած չեն, 50 տոկոսով հյուծված են տիֆից, վերածվել են կիսակմախքի, վազում են և ընկնում: Դրանց թիվը հասնում է 31-32 հազարի՝ ունենալով մոտ 900 սպաներ: Ահա դա է Հայկական բանակը: Զինվորները հագուստ չունեն: Գեներալ Սիլիկյանը այդ նիստին ելույթ ունենալով, շեշտում է, որ ինքը մինչև ապրիլի 1-ը պետք է իր ձեռքի տակ ունենա 16 հազար զինվոր՝ հակառակ դեպքում Հայաստանը ոչնչացված է: Այդ նպատակով էլ որոշվում է. 1/ խնդրել անգլիացիներին իրենց ջոկատները դնել Քարվանսարայում, Ալեքսանդրապոլում, Իգդիրում և Քուլպում, թեկուզև փոքրաթիվ ջոկատներ, 2/ խնդրել նրանց տալ հաց, հագուստ և սապոգներ Թիֆլիսից, 3/ խնդրել Վրաստանին վերադարձնել իրենց Հայկական կորպուսի ունեցվածքը, 4/ խնդրել գեներալ Բիչին այստեղ ուղարկել Հայաստանին անհրաժեշտ բոլոր բեռները / ցորեն, հաց, Թիֆլիսից ապրանքներ/: Դրանից ավելին անել հնարավոր չի,- եզրափակում է իր նամակը Ա.Խատիսյանը:[15]

Ուսումնասիրողների զգալի մասը զլանում են ընդգծել, որ բանակի ստեղծման ու ամրապնդման գործի դժվարությունները զգալի չափով պայմանավորված էին նաև նրանով, որ հարևան ,,եղբայրը,, Վրաստանի դեմոկրատական հանրապետությունը նրբորեն հարուցում էր մի շարք դժվարություններ զենք ու զինամթերքի՝ դեպի Հայաստան տեղափոխման առումով: Իսկ ամենածանրն այն էր, որ հայկական կառավարությանը պարտավորեցվեց համաձայն կնքված պայմանագրի Վրաստանին զիջել զենք ու զինամթերքի շուրջ 27 տոկոսը, որն անցկացվում էր Վրաստանով Հայաստան:[16] Անպես որ, որոշ ոչ լրջմիտ հեղինակների նման երազանքների գիրկն ընկնելով կարելի է շատ բան պատկերացնել / ասենք թե՝ լավ զինված 40 հազարանոց բանակ/, սակայն դրանք հաստատել արխիվային արժանահավատ տվյալներով, դժվար և անշնորհակալ գործ է, որից պետք է հրաժարվել:

Ինչպես երևում է Թիֆլիսի հայ դիվանագիտական ներկայացուցչության փաստաթղթերից և մասնավորապես Եվանգուլյանի հաղորդագրություններից, Հայկական բանակի կայացման գործում բացասական դեր էր կատարում վրացական կառավարությունը, որն Վրաստանի հայերի իր ան-հիմն զորակոչերով, ինչպես նաև զենքի ու զինամթերքի՝ դեպի Հայաստան տեղափոխման վրա իր արգելքներով ապակայունացնում էր իրավիճակը:[17]

Հարկ է սակայն նշել,որ վրացիները դա անում էին խոսքի ու գործի հակասմամբ, խոսքով հավաստիացնելով իրենց պատրաստակամության մասին՝ նպաստելու զորակոչին, օգնելու իրենց հարևանին, իրականում խոչընդոտելով դրան: Այդպիսի տպավորություն է թողնում Վրաստանի ռազմական նախարար Գեորգաձեի ուղերձը Հայաստանի ռազմական նախարարին, գլխավոր շտաբի պետ՝ Դոլուխանովին,[18] որում նա հայցում էր հայկական կողմի անհապաղ կարգադրությունը՝ շտապ կազմակերպել Հայկական կորպուսի՝ բոլոր զինվորների Հայաստան ուղարկելու գործը, որոնք գտնվում էին Թիֆլիսում և Վրաստանի տարածքում առհասարակ: Դրա համար վրացական կողմը խոստանում էր հատկացնել անհրաժեշտ շարժակազմերը և այլն: Սակայն գործնականում դա այդպես չէր: Այդ են վկայում բազմաթիվ փաստաթղթեր: Դա երևում է ներքոհիշյալ մի փաստաթղթից / 9 օգոստոսի, 1919թ./: Վրացական իշխանությունները Վրաստանի տարածքում, և մասնավորապես Ախալքալաքի գավառում, որի բնակչության 77

տոկոսը կազմում էին հայերը /կամ 85 հազար մարդ/,[19] զբաղվում էին զորակոչային տարիքի երիտասարդների ցուցակների ստեղծմամբ, ձգտելով նրանցով համալրել վրացական բանակը:[20] Նույնպիսի քաղաքականություն էր վարվում Վրաստանի իշխանությունների կողմից Հայկական Լոռու նկատմամբ:[21] Ժորդանիայի կառավարությունը 1918թ. սեպտեմբերի վերջերին նման հրահանգներ էր տվել տեղական իշխանություններին, որի համաձայն զորակոչվող հայերը պետք է ծառայեին վրացական զորքերում, հրաժարվելու դեպքում ճնշում գործադրելով գյուղական կոմիսարների և զորակոչի չներկայացողների ծնողների վրա, և այլ հակաօրինական քայլերի էին դիմել:

Անմասն չէր, անշուշտ, նմանատիպ քաղաքականությունից և մյուս հարևանը՝ Ադրբեջանը. այդ ապացուցելու համար կարելի է բերել բազմաթիվ օրինակներ: Բերենք դրանցից մեկը: Այսպես, Ադրբեջանի իշխանությունները իրենց հանրապետության անբաժան մաս համարելով Զանգեզուրը, Ղարաբաղը, Նախիջևանը, Շարուրը, Սուրմալուն, Ղազախը,- գրում է ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը Բաքվում 1920թ. սեպտեմբերի 10-ին,- *զորակոչից չեն ազատում նաև Ադրբեջանի զանազան վայրերում ապրող տաճկահայերին, ինչպես օրինակ, Գանձակի շրջանի Չարդախլու գյուղում ժամանակավոր բնակություն հաստատած տաճկահայ գաղթականներին:* /ընդգծումը մերն է Վ.Վ./:

Ակնհայտ է, որ բանակի ստեղծման գործը դժվարին էր, և մեր խնդիրն է պարզաբանել նաև Հայաստանի տարածքում գործող կուսակցությունների վերաբերմունքը այդ խնդրի նկատմամբ, ինչը և կարվի ստորև: Փաստաթղթերը վկայում են, որ այսպես թե այնպես Հայաստանում գործող կուսակցությունների մեծամասնությունը 1918-20թթ. կանգնած էր ազգային դիրքերում, աջակցում էր ազգային կանոնավոր բանակի ստեղծման գործին: Այսպես, սոցիալ-դեմոկրատ Հ.Ազատյանը Հայաստանի խորհրդի 1919թ. հունվարի 17-ի նիստում հանդես է գալիս հաշմանդամ զինվորների ապահովության մասին օրինագծի քննարկման կապակցությամբ, անելով հիմնավոր առաջարկներ, որոնք հանգում էին թե զինվորների և թե սպաների համար ապահովագրության հավասար պայմանների ստեղծմանը:[23]

Կուսակցությունները իրենց յուրահատուկ մոտեցումն ունեին հարցերին: Շատ հաճախ գործի մեջ իրատեսորեն խորանալու փոխարեն, նրանք նույնիսկ իրենց առողջ մտադրությունները հաճախ խճողում էին

կուսակցական քննադատամոլությամբ: Եվ այնուամենայնիվ, մտահոգություն բանակի կայացման, դրանում իշխող անառողջ տրամադրությունների հաղթահարման առումով, կար: Օրինակ, 1919թ. հոկտեմբերին Հայկական ռամկավարական և Ժողովրդական կուսակցությունների, ՌՍԴԲԿ /մենշևիկներ/, անկախ սոցիալիստների Ալեքսանդրապոլի կազմակերպությունների, Շիրակի գյուղացիների միության վարչության մի ուղերձի նախագծում, ուղղված կառավարությանը, ասվում էր. ,,երկրի ինքնապաշտպանության գործը-ազգայինի ամենապատասխանատու գործը-հանձնված է նույնպես կուսակցական, բայց անձեռնհաս անհատների, դուրս են ձգված արժանավորները, միմիայն այն պատճառով, որ գործում է կուսակցական խտրությունը:

Նկատելի է, որ փոխանակ ուժեղացնելու կանոնավոր բանակների կազմությունը, ընդհակառակը՝ նորից կենդանանում է խմբապետական կազմերի անկարգ և քայքայող դրությունը,,:[24]

Բանակի, ռազմական քաղաքականության հարցերը կառավարող կուսակցության՝ Հ.Հ.Դաշնակցության ուշադրության կենտրոնում էին: Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովը զորքի մասին հատուկ որոշում կայացրեց: Զորքի մասին Դրոյի տված զեկուցման հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում բոլոր քաղաքացիների պարտադիր երկամյա զինվորական ծառայության, բանակը բոլոր առումներով հայացնելու, և Հայոց պետության պաշտպանությանը ծառայեցնելու հրամայականի մասին: Բանակի հայացման գործում կարևոր դեր ունեցան հատկապես թուրքական բանակից հարյուրի չափ հայ սպաների ժամանումը և ծառայության անցնելը: Մարտունակ և որակյալ բանակ ունենալը կուսակցությունը տեսնում էր՝ մի կողմից հզոր տնտեսություն, մյուս կողմից՝ ռազմիկների բարոյական կայունության և հայրենիքին նվիրվածության մեջ:[25]

Կարևոր է անդրադառնալ նաև Հայաստանի հանրապետության տարածքում գործող և պառլամենտի անդամ հանդիսացող տարբեր քաղաքական կուսակցությունների պատերազմական-բանակային հարցերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորման որոշ արտահայտություններին: Հատկանշական է, որ ոչ միշտ է իրական, սրտացավ և ընբռնումով մոտեցում ցուցաբերվել այդ հարցերին: Օրինակ, չնայած այն հանգամանքին, որ հայ իրականության մեջ գոյություն ունեցող բոլոր կուսակցությունները այս կամ այն կերպ վճռորոշ պահերին

սատարել են կառավարությանը, սակայն երբեմն ունեցել են նաև ոչ լուրջ, ոչ լիարժեք մոտեցումներ երկրի պաշտպանության, ռազմական և ներքին շինարարության հարցերին: Հետաքրքիր է այդ առումով Հայաստանի խորհրդի 1919թ. հունվարի 10-ի նիստի արձանագրությունը, ուր անսթափ մոտեցում է ցուցաբերվում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից: Վերջինս հաշվի չառնելով այն հանգամանքը, որ առհասարակ ռազմական նախարարները ունենում են իրենց կորպորատիվ, ծառայողական բնույթի ներքին գաղտնիքները՝ կապված երկրի անվտանգության հարցերի հետ, պահանջում էին հրապարակայնություն: Այդ պահանջը անհիմն էր: Որպեսզի պարզ դառնա վերոհիշյալ խմբավորման անհիմն մոտեցման ողջ վնասակարությունը պետական քաղաքականության ընբռնման տեսանկյունից, ստորև մեջբերում ենք նրանց մոտեցումն ամբողջությամբ. ,, Նկատի ունենալով զինվորական մինիստրության, վարած հետադիմական մեծածախս և կործանիչ քաղաքականությունը, նրա անտարբեր և հաճախ հանցավոր վերաբերմունքը դեպի զորքի նյութական և բարոյական պահանջները՝ մանավանդ մահվան պատիժը վերականգնելուն վերաբերող հակաօրինական կարգադրությունը, ինչպես և այդ մինիստրության ամբողջ նախահաշվի գաղտնի հայտարարվելը, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան առաջարկում է մերժել այդ նախահաշիվը,,.[26] Սակայն սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի առաջարկը 3 ձայնից ավել չի ստանում, և դա տրամաբանական էր:

Հայաստանի համարյա բոլոր քաղաքական կուսակցություններն էլ իրենց մոտեցման այս կամ այն տարբերությամբ հանդերձ, կանգնած էին երկրի ազգային պաշտպանության կազմակերպման դիրքերում, կողմնակից էին ամուր ու կարգապահ բանակի ստեղծման գաղափարին: Անգամ շատ քննադատված և շատերի կողմից երբեմն մերժված Ազգային խորհրդարանի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան իր ծրագրային փաստաթղթերից մեկում շեշտադրում է հետևյալը. ,,Զինվորական ու երկրի պաշտպանության խնդիրներում բարձրաստիճան ու հասարակ զինվորականության շարքերից մեծաքանակ ավելորդ բերանների վտարումն, բանակի վերակազմություն ժողովրդի տնտեսական ու հասարակական ուժերի համեմատ և ժողովրդական ուժեղ միլիցիա քաղաքներում ու մանավանդ գյուղերում,,.[27] Սակայն բանակի ստեղծման, կառավարության ռազմաքաղաքական արդյունավետ գործունեության վրա բացասաբար էր ազդում Հայաստանի անտանտյան դաշնակիցների կողմից հաճախակի դրսևորվող երկդիմի քաղաքականությունը, երբեմն նույնիսկ շատ վնասակար քայլերը, որոնց դեմ բողոքում էին բոլոր կուսակցություններն անխտիր: Այսպես, պատգամավոր Մինախորյանը, ելույթ ունենալով Հայաստանի խորհրդի 1919թ. հունվարի 25-ի նիստում, ընդգծում է, որ ,,ոչ միայն հարևաններն են ուզում մեզ ոչնչացնել, այլ և նույնն է անում Անգլիան: Կարելի է ասել, որ մեր դժբախտությունների 99 տոկոսի պատասխանատվությունը դաշնակիցների վրա է ընկնում: Այսօր միակ գործնական քայլը մեր պարլամենտի կողմից պիտի լինի այն, որ մենք ցույց տանք, թե դաշնակիցների այդ բոլոր խաբեբայությունները մենք զգում և հասկանում ենք,,.[28] Այդպիսի մի շատ ուշագրավ վկայություն էլ մենք հանդիպում ենք Թիֆլիսի հայ դիվանագիտական ներկայացուցչին 1919թ. սեպտեմբերի 1-ին Հայաստանի պարլամենտի քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի կողմից ուղարկված հաղորդագրությունում, ուր ասվում էր հետևյալը. ,, Փարիզի մեր պատվիրակության գրություններից պարզվում է, որ անգլիացիք Կովկասում իրենց ներկայության ամբողջ ընթացքում եղել են ոչ անկեղծ դեպի մեզ ու վարել սիստեմատիկաբար մուսուլմանական քաղաքականություն... Անգլիան ամեն տեղ, ինչպես և Կովկասում վարում է քաղարկված մուսուլմանական քաղաքականություն...,,.[29] Ավելին, մի այլ փաստաթղթում ավելի ընդգծուն է ասվում այդ մասին: 1919թ. ապրիլի 30-ին Հայաստանի կառավարության նախագահ Ալ. Խատիսյանը Արևելքում անգլիական գլխավոր հրամանատար Միլնի հետ զրույցի ժամանակ բողոքում է անգլիացիների կողմից Կարսից ռազմական ունեցվածքի, զենքի, հագուստների և այլնի դուրս բերման դեմ, պահանջելով դադարեցնել այն: Դրան Միլնը շատ բազմիմաստ պատասխանում է, որ նախ 1/ իբր թե ,, պատերազմն ավարտվել է, կարիք չկա ուժեղացնելու բանակը, որ 4 տարի պատերազմել են ոչ թե նրա համար, որ ուժեղացնեն բանակը... բավական է ունենալ ոչ թե զորքեր, այլ լավ ժանդարմերիա. 2/ որ Կարսում ամեն ինչից շատ կա, հատկապես հագուստ, որ ոչ բոլոր ֆորտերն են այնտեղ նայվել, և եթե անգլիացիները այնտեղից դուրս են բերել հրետանին և փամփուշտները, ապա այն ուղարկված է գեներալ Դենիկինի բանակը, քանզի Դենիկինը կռվում է ընդդեմ բոլշևիկների, իսկ բոլշևիկներին անգլիացիները համարում են լուրջ թշնամիներ և

Հայաստանի համար:[30] Հարկ է ասել, որ անգլիական գեներալի տեսակետը չէր բխում այն իրական աշխարհաքաղաքական դրության գնահատականից, որում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ՝ շրջապատված թշնամիներով: Այն հաշվի չէր առնում, որ Հայաստանին իր առջև կանգնած խնդիրները լուծելու համար ոչ թե միայն լավ ոստիկանություն էր անհրաժեշտ ներքին խնդիրների լուծման համար, այլև գլխավորապես լավ զինված և հանդերձավորված բանակ, որը կարողանար հայ ժողովրդին տալ անվտանգության իրական երաշխիքներ: Եվ վերջապես, ամեն ինչ հարմարեցվում էր Մեծ Բրիտանիայի նեղ վեհապետական շահերին, իսկ դա արդեն կործանարար էր Հայաստանի համար: Հենց այդպես: Սակայն իրականում շատ բան ավելի մռայլ էր, քան մենք վերը ներկայացրինք: Բրիտանական զինվորական իշխանությունների կողմից Կարսից 60 հրանոթների և մեծ քանակությամբ արկերի ու փամփուշտների, ավտոմոբիլային սարքավորման, բամբակի և այլ գույքի դուրս բերման փաստը թողնում էր վատ տպավորություն նաև այն առումով, որ այն բացի Դենիկինից, հասցեագրված էր նաև, գուցե և միայն ադրբեջանցիներին: Այդ մասին Սիլիկյանի զեկուցագրի հիման վրա Նազարբեկյանը և շտաբի պետ, գեներալ-մայոր Հախվերդյանը 1919թ. մայիսի 2-ին հայտնում են զինվորական նախարար Ք.Արարատյանին. ,,Այդ բոլորը զորքի և ժողովրդի վրա թողնում են ճնշող տպավորություն, առավել ևս, որ այդ գույքը ուղարկվում է Բաքու, որը կարող է ընկնել Ադրբեջանի կառավարության ձեռքը,,:[31] Այս իրողության հաստատումն ակնհայտ երևում է Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան Թեքինսկու՝ 1919թ. մայիսի 10-ին կառավարության նախագահ Խան Խոյսկուն հղած հեռագրից. ,,Պատրվակով, թե բոլշևիկները սպառնում են Բաքվին, խնդրեք անգլիացիներին Կարսից թնդանոթները տեղափոխել Բաքու,,:[32]

Շատ հավանական է, որ ապագա թուրք-հայկական պատերազմի ժամանակահատվածում /1920թ. սեպտեմբեր-հոկտեմբեր/ Հայաստանի կրած պարտության, և մասնավորապես Կարսի անկման գլխավոր պատճառներից մեկը հենց անգլիացիների հակահայ քայլերն են: Անգլիական գեներալ Կորիի հետ Հայկական կառավարության 1919 թ. հունիսի 7-ի տեսակցության ժամանակ Ալ.Խատիսյանը պահանջում է կարգադրություն անել դադարեցնելու Կարսից զինվորական ունեցվածքի ապօրինի դուրսբերումը, քանի որ այն հանդիսանում էր ՀՀ սեփականություն: Այդ պատճառով էլ գեներալ Սիլիկյանը կասեցրել էր անգլիացիների գնացքի երթևեկությունը, որը գեներալ Թոմփսոնը օգտագործեց որպես պատրվակ արդարացնելու համար ռազմական ունեցվածքի դուրսբերումը:[33]

Այս հակահայկական գործողությունների դեմ բողոքեցին Հայաստանի խորհուրդը և նրա կուսակցական խմբավորումները, կառավարությունը սակայն, էական արդյունքներ ձեռք բերել՝ չհաջողվեց: Որոշ փաստաթղթերի մանրազնին ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ բանակի և ռազմական շինարարության հարցերը այս կամ այն առումով հետաքրքրել են Հայաստանի խորհրդի ընդդիմությանը: Չնայած ամեն ինչ չէ, որ կարելի է հալած լուղի տեղ ընդունել, սակայն հարկ է ընդգծել, որ նրանց արտահայտած մտքերը և տեսակետները բանակի, նրա գործունեության ու ղեկավարման վերաբերյալ արժանի են ուշադրության: Այսպես, բանավիճելով զինվորական նախարարության կողմից ներկայացված մասնակի զորացրման նախագծի շուրջ՝ կապված վրաց-հայկական պատերազմի ավարտի, երկրի վիճակի որոշակի կայունացման հետ, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիան 1919թ. հունվարի 7-ի Հայաստանի խորհրդի նիստում ,,ուշագրավ տեսակետ,, է /որն անշուշտ, ամենևին էլ զերծ չէ միակողմանիությունից/ արտահայտում, որի համաձայն ,,շատ ավելի լավ է ունենալ 5-6 հազարանոց լավ հագնված ու լավ սնված զորք, քան 16 հազար քաղցած ու տկլոր խուժան,,:[34]

Սա, իհարկե ոչ լիովին հաշվարկված, ոչ իմաստուն մոտեցում է հարցին սոցիալ-դեմոկրատների կողմից, չնայած իր ռացիոնալ հատիկներին՝ կապված զորքի որակի հետ: Խորհրդում սոցիալ-դեմոկրատական տեսակետի ներկայացնողը ոչ անհայտ Հ.Ազատյանն էր: Հիմք ընդունելով այն կիսախաբուսիկ պատկերացումը, որ հարկ է որակական ցուցանիշներով ուժեղ բանակ ունենալ, նրանք ռազմական քաղաքականության վերընշված հարցերի մասին դատում էին՝ կտրված ռեալ իրականությունից, այն աշխարհաքաղաքական ռեալությունից և հնարավորություններից , որոնցում գտնվում էր Հայաստանը այդ ժամանակ: Ավելին, նրանք հիմք ընդունելով այն կեղծ ու փարիսեցիական պատճառաբանությունը, որ հայերը փոքր ու աղքատ ժողովուրդ են, և արտաքին զորեղ թշնամու հանգամանքը, պնդում էին, թե իբր իրենք չեն

կարող 40-50 հազարանոց բանակ ունենալ՝ երկրի պաշտպանունակության և ռազմական շինարարության դժվարին և բազմապլան խնդիրները լուծելու համար:[35] Սոցիալ-դեմոկրատները տվյալ դեպքում փոխարեն գործ անելու, ավելի շատ զբաղված էին պարզապես քննադատամոլությամբ կառավարող կուսակցության՝ Հ.Հ.Դաշնակցության հասցեին / որոնց իհարկե կարելի էր խստորեն քննադատել, բայց ոչ մերկապարանոց քննադատությամբ զբաղվել/: Եվ որպես, արդյունք, սոցիալ-դեմոկրատները առաջարկում էին այս խնդրում շատ ավելի մի վատ բան, քան անում էր Դաշնակցական կուսակցությունը որպես կառավարող կուսակցություն: Այսպես, նրանք գտնում էին, որ այժմ և ևեթ հարկավոր է Հայաստանում մտցնել ժողովրդական միլիցիայի սիստեմը / ի դեպ, այդ փտած գաղափարը վերցված էր դրսից/, որ զորքը պետք է լինի ժողովրդական միլիցիայի տեսքով, որ մոտ ապագայում իրենց որևիցե թշնամի չի սպառնում / սա ևս խիստ մոլորություն էր, իսկ առհասարակ պետական քաղաքականության տեսանկյունից՝ վնասակար և անհեռատես /:[36]

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ինչքան էլ ոչ օբյեկտիվ լինեին Հայաստանի Առաջին հանրապետության ընդդիմության ներկայացուցիչները բանակի ու երկրի ինքնապաշտպանության կազմակերպական հարցերում, այնուամենայնիվ պետք է որոշակի արդարացիության երանգներ տեսնել նրանց քննադատությունում: Սակայն ամեն ինչի մասին կարելի է դատել չափի զգացումով , տեսնել ռեալականությունը: Առհասարակ կուսակցությունների վերաբերմունքը /թե դրական,և թե բացասական առումներով/ պատերազմի, ռազմական ծախսերի և այլնի նկատմամբ արժանի է ուշադրության: Այդ առումով հետաքրքրական է Հայաստանի խորհրդի 1919թ. հունվարի 10-ի նիստում քննարկումը՝ կապված զինվորական նախարարության նախահաշվի՝ 29 մլն. ռ. գումարի համար: Այս կապակցությամբ ելույթ ունեցած սոցիալ-դեմոկրատ Ազատյանը պնդում է, որ նախարարությունը վարել է անպատասխանատու խմբակցությունների քաղաքականություն, բերում է փաստական տվյալներ այդ գումարի աննպատակ օգտագործման մասին: Այնուհետև պնդում է, որ կան բազմաթիվ բողոքներ զինվորներից, որոնք ամիսներով ռոճիկներ չեն ստանում, վատ են կերակրվում, և այլն:[37]Սակայն սոցիալ-դեմոկրատների և սոցիալիստ-հեղափոխականների ֆրակցիաների առաջարկը չի

անցնում, ձայների մեծամասնությամբ անցնում է Հայ Հեղափոխական Դաշնակցության բանաձևը:

Կուսակցությունները հայ ժողովրդի համար ճակատագրական պահերին միշտ էլ զորավիգ են եղել հայրենիքին, պետությանը: 1920թ. աշնանը թուրք-հայկական ճակատագրական պատերազմի ժամանակ Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը և մյուս կուսակցությունները միասին հանդես եկան հայրենիքի պաշտպանության և ոտխին արժանի հակահարված տալու վճռականությամբ: Նրանք իրենց պատրաստակամությունը հայտնեցին աջակցելու կառավարությանը և ըստ կարելվույն օգնելու ռազմաճակատում մարտնչող մեր զորամասերին: ՀՍԴԲԿ ԿԿ-ն հրապարակեց առանձին կոչ՝ ուղղված հայ ժողովրդին՝ անարգ թշնամուն հակահարված տալու և հայրենիքը պաշտպանելու վերաբերյալ:[38] Հոկտեմբերի 26-ին Երևանում կայացած միջկուսակցական միտինգում կրակոտ ճառով հանդես եկավ Բ.Իշխանյանը՝ ընդգծելով երկրին սպառնացող վտանգն ու հայրենիքը պաշտպանելու անհրաժեշտությունը:[39]

Հայրենիքի համար ծանր պահին բոլոր ֆրակցիաները հայտարարեցին, որ տաճկական վտանգը իրենց էլ է նեղացնում: Ընդունվում է համակրանքի բանաձև կառավարության հասցեին, որը լիազորվում է իրականացնելու լիարժեք զորակոչ: Այնպես որ, քաղաքական կուսակցություններին միշտ էլ մտահոգել են ռազմական քաղաքականության ցավոտ հարցերը, որոնց նրանք երբեմն էլ վճռականությամբ պաշտպան են կանգնել:

- *Օգտագործված գրականություն*

1. ՀՀ ՊԿՊԱ,ֆ. 276,g.1,գ.79,թ.44-45:
2. Նույն տեղում,թ.47:
3. Նույն տեղում, ֆ.200,g.1,գ.498,թ.33:
4. Տես՝ Կ.Սասունի, Հայ-թուրքական պատերազմը.- Հայրենիք.Բոստոն 1926. թիվ 11-12,էջ 112:
5. Տես՝ Վրացյան Սիմոն, Հայաստանի հանրապետություն. Եր.: Հայաստան, 1993,էջ 514:
6. Հայ ժողովրդի պատմություն. Երևան, ԳԱ հրատ., 1967,հ.7,էջ 52:
7. Տես՝ Հակոբ Տեր-Հակոբյան. Հայաստանի վերջին աղետը, Կ.Պոլիս, 1921, էջ 88:
8. Տես՝ Վրացյան Սիմոն, Հին թղթեր նոր պատմության համար, էջ 288:
9. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, g.1,գ.498, թ.768:

10. Նույն տեղում, գ.607,թ.54:
11. Նույն տեղում, ֆ.199,g.1,գ.142,թ.186:
12. Տես՝ Հ.Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, էջ 86:
13. Տես՝ Ա.Խատիսյան , Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը. Բեյրութ, 1968,էջ 183:
14. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 201,g.1,գ.486, մաս 1-ին,թ.62:
15. Տես նույն տեղում. 276,g.1,գ.116,թ.36:
16. Տես՝ նույն տեղում, ֆ. 200, g.1,գ.498,թ.768:
17. Տես՝ նույն տեղում, ֆ.276,g.1,գ.12,թ.121, գ.42,թ.286 և այլն:
18. Տես՝ նույն տեղում, ֆ.276,g.1,գ.43,թ.31,74:
19. Տես՝ նույն տեղում, գ. 96, թ.2:
20. Տես՝ նույն տեղում, գ. 62, թ.84:
21. Տես՝ նույն տեղում,գ.12,թ.195, գ.67,թ.35 և այլն:
22. Տես՝ նույն տեղում, փ. 278,g.1,գ.32,թ.95:
23. Տես՝ նույն տեղում, ֆ.198, g.1,գ.17,թ.70,77:
24. Հայաստանի հանրապետության Հասարակական և Քաղաքական Կազմակերպությունների փաստաթղթերի Կենտրոնական Պետական Արխիվ / այսուհետև՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ/, ֆ.4033,g.7,գ.2,թ.1,գ.17,թ.1: Տես՝ նաև ՀՀ ՊԿՊԱ, ֆ.404,g.1,գ.36,թ.1:
25. Տես՝ Արարատ Հակոբյան, Հ.Յ.Դ. 9-րդ ընդհանուր ժողովը.-Եր.: Մ.Վարանդյան, 1974, էջ 34-35:
26. ՀՀ ՊԿՊԱ,ֆ.198,g.1,գ.15,թ.58:
27. Տես՝ նույն տեղում,ֆ.404,g.1,գ.1,թ.6:
28. Տես՝ նույն տեղում ֆ.198,g.1,գ.15,թ.89:
29. Տես՝ նույն տեղում, փ.276, g.1,գ.97, թ.126:
30. Տես՝ նույն տեղում, գ.101,թ.48, գ.114, թ.196:
31. Տես՝ նույն տեղում, ֆ.276,g.1,գ.158,թ.4:
32. Տես՝ նույն տեղում, ֆ.200,g.1,գ.299,թ.7:
33. Տես՝ նույն տեղում, ֆ.276,g.1,գ.114,թ.196;
34. Տես՝ ,,Կայծ,, թիվ 24, 30-ը հունվարի, 1919թ.:
35. Տես՝ նույն տեղում:
36. Տես՝ ,,Կայծ,, թիվ 24, 30-ը հունվարի, 1919թ.:
37. Տես՝,,Կայծ,, թիվ 13, դեկտեմբերի18-ը , 1918թ, թիվ 25, 1-ը փետրվարի,1919թ.:
38. Տես՝ ,,Հառաջ,, 3-ը հոկտեմբերի 1920թ.:
39. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 198,g.1,գ.74,թ.2:

6. *Ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանի հանրապետությունում 1920 թվականին և Հայկական Հարցը Ազգերի Լիգայում*

1920թ. Հայաստանը թևակոխեց համեմատաբար կայուն խաղաղության հույսերով: 1920թ. հունվարին կառավարությունը դեֆակտո ճանաչվեց մեծ տերությունների համախմբի կողմից, իսկ պետական սահմաններում տիրում էր համեմատական խաղաղություն: 1920 թ. հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ ,, Հայաստանի երկրորդ մայրաքաղաքում,, հանդիսավոր պայմաններում տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի բացումը:

Կառավարությանը հաջողվեց հանդարտացնել Կարսի, Զանգիբասարի, Բոյուք-Վեդիի, Զոդի և Հայաստանի այլ շրջանների մահմեդականների ընդվզումները և հակապետական գործունեությունը, որոնք տագնապի մեջ էին պահում տարածաշրջանը: Պետությունը և ՀՀ կառավարությունը, հաղթահարելով հին դժվարությունները, ձեռնարկել էին բանակի ուժեղացման և ամրապնդման ծրագրերի իրականացումը:

Ըստ այդմ էլ այդ հաջողությունները հույսեր էին առաջացրել Հայկական Հարցի նպաստավոր լուծման համար: Ստեղծվել էր որոշակիորեն ոգեպնդիչ իրավիճակ: Դա այն ժամանակաշրջանն էր, երբ բոլշևիզմը, որպես ռազմաքաղաքական և հասարակական հոսանք, Ռուսաստանում ամրապնդման գործընթաց էր ապրում, հաստատակամորեն ընթանում էր դեպի հիմնավոր կայունացում, սակայն առաջին պահին անփորձ աչքի համար ոչ տեսանելի, որի հետևանքով հայաստանյան դիվանագիտական շրջանները Հայկական Հարցի լուծման բոլոր հնարավորությունների իրականացման ռազմավարությունը մշակելիս ըստ էության ավելի շատ հենվում էին Կոլչակի, Վրանգելի,

Դենիկինի և այլոց վրա, քան հիմնավոր ուժերի վրա, կորցնելով թանկարժեք, նպաստավոր ժամանակը և ռազմավարական հնարավորությունների առավել արդյունավետ օգտագործման բոլոր հույսերը՝ կուրորեն ապավինելով եվրոպական մեծ տերությունների վերացական հավաստիացումներին, նրանց կողմից հրավիրվող համաժողովների ընդունած ձևական բանաձևումներին: Հայ քաղաքական շրջանները ըստ էության չէին ցանկանում ըմբռնել,որ ժամանակավոր շահերը, ժամանակավոր հաշիվները հարկադրում էին պատմականորեն իրար թշնամի երկու պետություններին՝ Ռուսաստանին և Թուրքիային ,,եղբայրական,, ձեռք մեկնելու իրար և մի համատեղ ճակատ կազմելու՝ ընդդեմ ընդհանուր թշնամու՝ ,,դրամատիրական Եվրոպայի,,:

Ինչպես և 1918-1919 թվականներին, 1920 թվականին նույնպես Հայաստանի դաշնակցական կառավարության ողջ քաղաքականությունը նպատակամղված էր մեծ տերությունների օգնության վրա հենվելուն, նրանց միջոցով Հայկական Հարցի լուծման՝ ,,միացյալ , անկախ Հայաստան,, ստեղծելուն: Այդ ծրագրերն էլ տրամագծորեն հակադիր էին ռուսական կողմնորոշմանը, ինչը հստակորեն արտացոլվեց 1920թ. գագաթաժողովներում, և մասնավորապես Ազգերի Լիգայի գործունեության մեջ, ուր քննարկվում էին Թուրքիայի, Հայաստանի և այլ տերությունների հարցերը:

Իրադարձությունների զարգացման տրամաբանական ընթացքի վերլուծությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Անտանտի փոքր դաշնակցի վերաբերյալ ընդունված շատ որոշումներ այդ ժամանակ ձևակերպվում էին, հաճախ հիմքում ունենալով այն ռազմաքաղաքական իրավիճակը, որ 1920թ. գարնանը և հետագա ժամանակաշրջանում ստեղծվել էր Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Անդրկովկասում, Հայաստանում և նրա շուրջ: Անտանտի դիրքորոշումը ելնում էր անդրկովկասյան հանրապետություններին, այդ թվում և Հայաստանին խրախուսելու դիվանագիտական-ռազմաքաղաքական նպատակադրումներից, իրենց շահերի ապահովման և Ռուսաստանին հակադրվելու տեսանկյունից: Հայկական Հարցում Արևմուտքն ամենևին էլ չէր առաջնորդվում հայասիրական, մարդասիրական մեծ մղումներով: Տվյալ իրավիճակում Հայաստանը նրանց հետաքրքրում էր բոլշևիկյան Ռուսաստանի դեմ պատնեշման և մերձավոր արևելյան տարածաշրջանի քարտեզը իրենց ռազմաքաղաքական և տնտեսական

առևտրական շահերին համապատասխանեցնելու տեսանկյունից: Դա լավ կազմակերպված խաղ էր, ուր փոքրիկ Հայաստանին երկրորդական, ,,խաղաթղթային,, դեր էր հատկացված:

Սևրն էլ հենց եղավ հայկական դիվանագիտության գայթակղության այն փորձաքարը, որին այն չդիմացավ, քանզի 1920թ. օգոստոսի 10-ի խաղաղության պայմանագրով կարծես թե Հայաստանին տրվում էր ամեն ինչ, սակայն ըստ էության՝ ոչինչ: Պայմանագիր, սակայն, որն այդպես էլ երբեք չվավերացվեց, ինչը հմտորեն շահարկվեց քիչ ավելի ուշ Ազգերի Լիգայի կազմի մեջ մտնող նույն երկրների խմբի կողմից: Շատ դիպուկ է նկատել 1918-20թթ. Հայաստանի Առաջին Հանրապետության գործող դեմքերից մեկը՝ Կարո Սասունին. ,, Այդ ժամանակներուն պարզ և որոշ էր, որ ոչ մեկ եվրոպացի զինվոր պիտի չգար Հայաստան՝ Փարիզի մեծ ժողովին որոշումները իրագործելու: Երկրի հայ քաղաքական ղեկավարությունը, քունէն նոր արթնացածի պես, կանգնած էր այդ անօրինական իրականության առջև և հակառակ մեծ պետությունների տված որոշմանը՝ կը զգար, որ իր սեփական ուժերով պիտի չկարենայ բռնագրավել այն հողամասերը, որոնք կը լրացնեին գոնե պաշտոնական Հայաստանը,,:[1] Այդ նույն միտքն է արտահայտել նաև Հովհ.Քաջազնունին. ,, Սևրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը , կաշկանդել միտքը, մթնացրել իրականության գիտակցությունը,,:[2]

Իսկ իրադարձությունները իրենց սպասեցնել չտվեցին: 1919թ. հունվարի 18-ին Փարիզում բացված Խաղաղության վեհաժողովը և նորաստեղծ Ազգերի Լիգան որոշում են Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին: 1919թ. փետրվարի 26-ին Վ.Վիլսոնը Սպիտակ տանն անցկացրեց հատուկ խորհրդակցություն՝ Հայաստանի մանդատի հարցի առթիվ և հայտարարեց, որ ,,եթե Ամերիկայի Միացյալ Նահանգները որևէ մանդատ ընդունի Ազգերի Լիգայից, ապա առաջին հերթին նա պետք է ընդունի Հայաստանի մանդատը,,:[3] Անգլիան 1920թ. մարտի 12-ին Անտանտի Գերագույն խորհրդի անունից դիմեց Ազգերի Լիգային՝ ԱՄՆ-ին հանձնելու Հայաստանի մանդատը: Բնավ պատահականություն չէ, որ Հայաստանի բարեկամները ԱՄՆ-ում զգուշացնում էին, որ Սենատի կողմից մերժվելու դեպքում կխրախուսվի թուրքական նացիոնալիստների ագրեսիվությունը՝ չտագնապելով ամերիկյան օգնությունից: Այդպես էլ եղավ: 1920թ. հունիսի 1-ին Սենատը մերժեց նախա-

գահի առաջարկը և թաղեց մանդատի մասին հարցը: Մանդատի ընդունման մերժումը կապված էր նաև Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքման հետաձգման հետ: Ակնհայտից էլ ակնհայտ էր, որ փոփոխված ռազմաքաղաքական և դիվանագիտական իրավիճակը, ինչպես նաև խորհրդային կարգերի հաջողությունները Ռուսաստանում և նրա շուրջ, ավելացրած՝ ԱՄՆ-ի կոնգրեսի հակահայկական դիրքորոշումը հարկադրեցին պետության ղեկավարին՝ Վիլսոնին հրաժարվելու Հայաստանի նկատմամբ խնամակալության մտադրությունից: Ազգերի Լիգան մի քանի անգամ քննարկել է Հայկական Հարցը՝ կապված Հայաստանի Հանրապետության կառավարության դիմումի հետ՝ ընդունվելու Լիգայի շարքերը, Հայաստանի նկատմամբ մանդատորության, 1920 թ. թուրք-հայկական պատերազմի կապակցությամբ, Թուրքիայի տերիտորիայում այսպես կոչված ,,Հայկական Ազգային Օջախի,, ստեղծման հարցի, ինչպես նաև հայ փախստականների հետ կապված:

Ազգերի Լիգա ընդունվելու մասին դիմումը տրվեց Հայաստանի կառավարության կողմից 1920թ. մայիսին: Ձեռնարկելով այդ քայլը, Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարությունը հույս ուներ ստանալ հիմնավոր օգնություն Ազգերի համագործակցության կողմից, հատկապես քեմալական Թուրքիայի ոտնձգություններից պաշտպանվելու առումով: Այդ դիմումը մնաց Ազգերի Լիգայում ամիսներ շարունակ, և ի վերջո մերժվեց: Այն անցանկալի գտնվեց Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարությունների կողմից: Որպես պատճառ բերվեց պայմանագրի չվավերացված լինելը, համաձայն որի Հայաստանը պետք է դառնար ինքնուրույն պետություն, որ Վիլսոնի կողմից որոշված ,,Հայաստանի սահմանները, այնքան են տարածված,, , որ Ազգերի Լիգայի մեջ մտնող տերություններն առկա պայմանների լույսի տակ դժվարությամբ կարող են իրենց վրա պատասխանատվություն վերցնել երաշխավորելու կամ պաշտպանելու դրանք,,:[4] Դա փաստացիորեն նշանակում էր հանդես գալ հօգուտ Թուրքիայի շահերի. քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի միջև նշմարվող մերձեցումը անհանգստացրեց Ազգերի Լիգայի առաջատար տերություններին, որոնք տագնապեցին իրենց ազդեցության հնարավոր կորստից Թուրքիայի վրա: Հայաստանը զոհաբերվեց Անտանտի զոհասեղանին, որի հլու գործիքն էր Լիգա կոչվածը:

Հետաքրքրական է Ալ.Խատիսյանի վկայակոչումն այդ մասին. ,,Բնորոշ է, որ ուղարկուած հեռագիրները չափազանց բացասական հետևանք ունեցան ուրիշ կողմէ: Ճիշտ նույն օրերուն / 1920թ. նոյեմբերի վերջերը/ Ժընեւ առաջին անգամ գումարած էր Ազգերու Լիկան և այնտեղ հարց էր դրուած Հայաստանը և Վրաստանը ընդունելու մասին Ազգերու Լիկայի կազմի մեջ: Հայաստանի ծանր վիճակի մասին նոր ստացած տեղեկությունները ստիպած էին անգլիական, ֆրանսիական և իտալական ներկայացուցիչներուն Ժընեվ՝ չընդունիլ Հայաստանը և Վրաստանը Ազգերու Լիկայի մեջ, որպէսզի Լիկայի կանոնագրի 10-րդ յօդուածի համաձայն ստիպուած չըլլային օգնութիւն հասցնել Հայաստանին և Վրաստանին: Այսպիսով, ամենատագնապալի և ծանր րոպեին Հայաստանը լքուեցաւ և գիտակցաբար ձգուեցաւ մենակ: Թուրքերը տեսան այդ, հասկացան և բոլոր եզրակացութիւնները ըրին յօգուտ իրենց և ի վնաս Հայաստանի: Այդ մասին իրենք իսկ թուրքերը ըսին ինձ ի դիմաց արտաքին գործերու նախարար Բեքիր Սամի բեյի և զորավար Քեազիմ Կարաբեքիր փաշայի,,:[5] Մերժման պատճառները, անշուշտ, պետք է տեսնել ընդհանրապես Անդրկովկասի և Քեմալական Թուրքիայի հարցում Անտանտի որդեգրած քաղաքականության մեջ:

Փաստորեն Ազգերի Լիգան գործիք էր մեծ տերությունների, և հատկապես Մեծ Բրիտանիայի ձեռքին: Հետևապես, նրա դիրքորոշումը չէր կարող էապես տարբերվել այլ տերությունների դիրքից, ինչը բազմակողմանիորեն բացահայտվել է Ագապի Նասիբյանի կողմից:[6]

Ազգերի Լիգայի անդամության համար Հայաստանը դիմում էր արել դեռ 1920թ. մայիսի 13-ին՝ Ավ. Ահարոնյանի միջոցով, երբ դեռ Թուրքիայի հետ պատերազմի մեջ չէր և սեպտեմբերի 27-ին, և վերջապես հեկտեմբերին՝ բողոքելով Լիգային քեմալական արշավանքի կապակցությամբ և խնդրելով ռազմաքաղաքական օգնություն: Լիգայի խորհուրդն էլ այդ խնդիրը հաղորդեց Սևրի պայմանագիրը ստորագրած գլխավոր տերություններին / Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա/, առաջարկելով ճշտել Հայաստանի սահմանները՝ վերջինիս Լիգային անդամագրվելու դիմումը քննարկելու համար, իսկ Հայաստանից էլ պահանջեց տվյալներ ներկայացնել հայկական բանակի ու նավատորմի, ինչպես նաև ՀՀ պաշտպանության համար անհրաժեշտ ուժերի և ընդհանուր ժողովում նրա ներկայացուցչության մասին: Այդ տեղեկությունները ներկայացվեցին Ավ. Ահարոնյանի կողմից ռազմական

հարցերի գծով մշտական խորհրդակցական հանձնաժողովին, դրանց հիման վրա հարցը նախապատրաստվեց և մտցվեց Լիգայի ընդհանուր ժողով: Այդ առումով դեռ նոյեմբերի 10-ին Լ.Ջորջը հայտնել էր Լիգայի խորհրդին, թե իբր դաշնակից տերությունները ամեն ինչ անում են Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու համար՝ ուղարկելով զենք, զինամթերք, վառելիք և այլն: Սակայն փաստերը վկայում են, որ Անգլիան միայն մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի զենք էր վաճառել Հայաստանին, որի զգալի մասը այդպես էլ տեղ չէր հասել, իսկ մյուս տերությունները այդպես էլ ընդհանրապես ոչ մի լուրջ օգնություն ցույց չցուցաբերեցին,[7] իսկ Իտալիան և Ֆրանսիան զենք և ռազմամթերք էին մատակարարում Թուրքիային:[8] 1920թ. գումարված Լիգայի ընդհանուր ժողովում մի շարք եվրոպական պետությունների ղեկավարներ, այդ թվում Ռ.Սեսիլը, Վիվիանին և ուրիշներ սրտաճմլիկ ելույթներ ունեցան ի պաշտպանություն Հայաստանի, սակայն ամեն անգամ հարցի լուծումը հետաձգվում էր հաջորդ նիստին: Բերվում էին տարբեր փաստարկներ, մեկ Սևրի չվավերացված լինելը, մեկ նախագահ Վիլսոնի կողմից սահմանները որոշած չլինելը / ինչը կատարվեց միայն նոյեմբերի 22-ին/, այնուհետև քեմալական Թուրքիան կազմակերպված պետություն չի, որի վրա էլ հետևաբար հնարավոր չի ճնշում գործադրել թե հասարակական կարծիքի, և թե տնտեսական-քաղաքական , առավել ևս՝ ռազմական եղանակներով: Լորդ Բալֆուրը Քեմալին համեմատելով ավազակի հետ, նույնիսկ Լիգան համեմատեց այն մարդու հետ, որն ափից դիտում է նավաբեկումը, տեսնում փրկվել ցանկացող մարդկանց ջանքերը, բայց ի վիճակի չէ օգնել, իսկ ֆրանսիացի Վիվիանին Ազգերի Լիգային մեղադրեց այն բանի համար, որ ժամանակին չի ընդունել միջազգային զինված ուժեր ստեղծելու մասին ֆրանսիայի առաջարկը և այժմ, իր տրամադրության տակ նման ուժեր չունենալով, Հայաստանին որևէ օգնություն ցուցաբերելու կարողություն չի կարողանում դրսևորել:[9] Սա, անշուշտ, դիվանագիտական երկերեսանիության դասական նմուշ է, ուշադրության արժանի:

Երկար քննարկումներից հետո, նոյեմբերի 22-ին Ազգերի Լիգայի ընդհանուր ժողովը Վիվիանու առաջարկությամբ ընդունեց / Լաֆոնտենի և Սեսիլի ուղղումներով/ հետևյալ որոշումը. ,,Չգտնելով օգնել Լիգայի խորհրդին ամենակարճ ժամանակամիջոցում վերջ դնելու հայկական սարսափելի ողբերգությանը, ժողովը խորհրդին առաջարկում է բանակցել կառավարությունների հետ և հանձնարարել տերություններից որևէ մեկին՝ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու Հայաստանի և քեմալականների միջև թշնամական գործողությունները դադարեցնելու համար: Բացի դրանից, ժողովը 6 հոգուց բաղկացած հանձնաժողովին հանձնարարում է քննարկել միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում Հայաստանի ու քեմալականների միջև թշնամական գործողությունները դադարեցնելու համար և զեկուցել ժողովին ներկա նստաշրջանի ընթացքում,,:[10]

Այդ որոշման ձևական բնույթը ակնհայտ էր, որովհետև այն ընդունվել էր թուրք-հայկական զինադադարի հաստատումից չորս օր հետո միայն, նոյեմբերի 18-ին՝ հանգստացնելու համար հասարակական կարծիքը: Պատահական չէ, որ արդեն նոյեմբերի 25-ին Լիգայի խորհուրդը, դիմելով տերություններին, խնդրեց հայտնել իրենց պատրաստակամության մասին, ավելացնելով, որ նման առաքելության ստանձնումը հետագայի համար ոչ մի մշտական բնույթի պարտավորության չի հանգեցնի: Սակայն դրանք արդեն ուշացած քայլեր էին: Իսկ ԱՄՆ-ի պատրաստակամությունը պայմանավորվեց կոնգրեսի որոշմամբ, որն այդ ժամանակ նիստեր չէր գումարում, և անշուշտ, պայմանով, եթե մյուս տերությունները ցուցաբերեն բարոյական և դիվանագիտական աջակցություն ԱՄՆ-ին: Աջակցություն ցուցաբերեցին միայն միջազգային ուժի տեսանկյունից այնպիսի երկրորդական տերություններ, ինչպիսիք էին այդ ժամանակ Բրազիլիան և Իսպանիան, որը խիստ անբավարար էր: Տերությունների քամելեոնական դիրքորոշումը լիուլի բացահայտվեց դեկտեմբերի սկզբներին Լոնդոնում գումարված Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ղեկավարների վեհաժողովում: Հայաստանին չօգնելու տարբեր կեղծ պատճառաբանություններ բերվեցին, նորից մատնանշելով ինչպես Սևրի չվավերացված լինելը, սահմանների ընդարձակությունը, այնպես էլ այլ սին փաստարկներ, իսկ դեկտեմբերի 3-ին արտահայտվեցին Հայաստանի ընդունումը Լիգայի մեջ հետաձգելու օգտին, և այդ բովանդակությամբ հեռագրեր ուղարկվեցին Ժնև՝ Ազգերի Լիգայի ընդհանուր ժողովի տերություններին: Դիմումում ասվում էր. ,,Լոնդոնում հավաքված երեք տերությունների ներկայացուցիչները քննարկեցին Ժնևում բարձրացված Հայաստանն Ազգերի Լիգա ընդունելու հարցը և միաձայն եզրակացության եկան, որ անհնար է այս պահին այդ քայլին դիմել,

որովհետև Սևրի պայմանագիրը, որի համաձայն Հայաստանը կազմելու է անկախ պետություն, դեռևս վավերացված չի: Եվ բացի այդ, Հայաստանի սահմանները, ինչպես դրանք հենց նոր որոշված են պրեզիդենտ Վիլսոնի կողմից ի պատասխան միջնորդության մասին առաջարկության, որ արել են տերությունները նրան, այնքան են տարածված, որ Ազգերի Լիգայի մեջ մտնող տերություններն առկա պայմանների լույսի տակ դժվարությամբ կարող են իրենց վրա պատասխանատվություն վերցնել երաշխավորելու կամ պաշպանելու դրանք,,:[11]

Սրանք կեղծ փաստարկներ էին, չնայած այդ սահմանները իրենց մեջ ներառնում էին Թուրքահայաստանի ընդամենը 40 տոկոսը: Եվ չնայած այն հանգամանքին, որ Լիգայի ենթահանձնաժողովը արտահայտվել էր Հայաստանի ընդունման օգտին, սակայն դա չփոխեց իրադարձությունների զարգացման չարաբաստիկ ընթացքը: Դեկտեմբերի 9-ին ժողովը որոշեց Հայաստանի նկատմամբ կիրառել Բալթյան հանրապետությունների համար ընդունված որոշումը, այսինքն՝ Հայաստանը Լիգայի մեջ չընդունել որպես իրավահավասար անդամ, սակայն թույլ տալ մասնակցելու տեխնիկական հանձնաժողովին, որը տարածվեց նաև Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ: Դեկտեմբերի 15-16-ին Լիգայի ընդհանուր ժողովը նորից անդրադարձավ Հայաստանի հարցին և ձայների մեծամասնությամբ / 26-ը ընդդեմ 8-ի/ մերժեց նրա մուտքը Ազգերի Լիգա: Հայաստանի օգտին քվեարկել էին Կանադան, Լեհաստանը,Շվեդիան, Պորտուգալիան, Սալվադորը, Ուրուգվայը, Վենեսուելան, իսկ Ֆրանսիան ձեռնպահ էր մնացել:

Նմանապես մեծ տերությունները ձախողեցին և Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու Ռումինիայի առաջարկը: Լիգայի ընդհանուր ժողովը դեկտեմբերի 17-ի նիստում ռումինական ներկայացուցիչ Իոնեսկուն առաջարկեց Լիգայի անդամ երկրների մասնակցությամբ 40 հազարանոց մի էքսպեդիցիոն կորպուս ստեղծել և ուղարկել Հայաստան: Սակայն այն բանից հետո, երբ դեկտեմբերի 18-ին Ֆրանսիայի ներկայացուցիչ Վիվիանին հայտարարեց, թե ֆրանսիական պատվիրակները նման հարց քննարկելու լիազորություն չունեն, ձախողվեց այդ հարցի քննարկումը, և հենց հաջորդ օրն իսկ Ազգերի Լիգայի ընդհանուր ժողովը ավարտեց իր աշխատանքները, առանց Հայաստանի համար որևիցե գործնական քայլ անելու:[12] Ինչ վերաբերվում է նախագահ Վիլսոնի միջնորդության հարցին, ապա թեև այդ նպատակի համար լիազորել էին Ստամբուլում ամերիկյան նախկին դեսպան Մորգենթաուին, սակայն շուտով ակնհայտ դարձավ դրա ոչ ռեալականությունը, քանի որ Հայաստանն ընկել էր ռուսական քաղաքականության և բանակի ազդեցության գոտու մեջ, ստորագրվել էր Ալեքսանդրապոլի ,,հանրահռչակ,, պայմանագիրը, որին հաջորդեց խորհրդայնացումը:

Ակնհայտ է, որ Հայկական Հարցի տապալումը Ազգերի Լիգայում միանգամայն օրինաչափ էր, այն բխում էր արևմտյան տերությունների դիրքորոշումից: Լինելով նրանց գործիքը, Ազգերի Լիգայի որդեգրած քաղաքականությունն էլ հենց հանգեցրեց Հայաստանի ճակատագրական մեկուսացմանը և անկմանը: Դա Հայկական Հարցի մոռացման, սպանելու քաղաքականություն էր, ուրիշ ոչինչ, որից շատ հմտորեն կառչեցին Անտանտի քեմալական ,,եղբայրները,, , որոնք ճարպկորեն օգտվեցին նաև բոլշևիկյան Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությունից: Մեծ տերությունները պարզապես լքեցին Հայաստանին: Այս առումով հրաշալի է արտահայտվել Ջոն Ռիդը Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարում. ,,Ոչ, ընկերներ, քեռի Սեմը երբեք ոչ մի բան ձրի չի տալիս: Նա գալիս է մի ձեռքին՝ դարմանով լի տոպրակ և մյուսին՝ մտրակ: Ով քեռի Սեմի խոստումներն ընդունում է մաքուր դրամի տեղ, նա հարկադրված կլինի դրա համար վճարել արյամբ,,:[13] Այնուհետև իր խոսքը կոնկրետացնելով հայերի մասին, նա նշում է,որ Ամերիկան գերադասում է հանդես գալ սոսկ ,,մարդասիրական,, դեկլարացիաներով, բայց իրական օգնություն չի կազմակերպում, վկայակոչելով նաև 1915թ, ցեղասպանությունը, որի կապակցությամբ ԱՄՆ-ը նույնիսկ լրջորեն չբողոքեց:[14]

Լեոն, խոսելով այդ ժամանակաշրջանի մասին, գրում է, որ հայ ժողովրդի դժբախտության պատճառներից մեկն էլ այն էր, որ նա ուներ լավ խմբապետներ, բայց վատ քաղաքագետներ:[15] Այդ է վկայակոչում նաև Հովի. Քաջազնունին, համաձայն որի ,,խմբային ու խմբապետական սիստեմը, որ մասնավորապես խրախուսվել էր բյուրոկառավարության կողմից, քանդել էր զինվորական կազմի ամբողջությունը, միությունը ,,:[16]

Սևրով և Անգլիայից ստացված օգնությամբ ոգևորված՝ Հայաստանի կառավարությունը ևս մեկ անգամ ետ է կանգնում Ռուսաստանի

հետ դաշնակցությունից, սակայն արդեն փաստ էր, որ ռեալ ուժը Անդրկովկասում և նրա շուրջ Ռուսաստանն է: Ետ կանգնել Սևրի խախուտ ճանապարհից՝ այդպես էլ նրանք չհամարձակվեցին:

Ռազմաքաղաքական նոր իրավիճակը 1920թ.-ին նպաստավոր գտնվեց քեմալական Թուրքիայի համար՝ Հայաստանի հետ հաղթական պատերազմի դեպքում վերջիններիս հրաժարեցնել Հայկական Հարցի լուծման գլխավոր կռվանից՝ Սևրից, որից էլ նրանք ճարպկորեն օգտվեցին: Իսկ ռազմաքաղաքական նոր իրավիճակը Անդրկովկասում նրանով էր նպաստավոր, որ Ռուսիայի հետ թուրքերի հարաբերությունները կարգավորվել էին, իսկ Վրաստանից էլ ձեռք բերվեց չեզոքության խոստում:[17]

Հետաքրքիր է այս առումով նաև նշել, որ Հայաստանի ղեկավարության շրջանում էլ աստիճանաբար արմատավորվում էր այն կարծիքը, որ հնարավոր է հենց նույն թուրքերի հետ բանակցել և թեկուզև որոշ զիջումներով, պահպանել Հայաստանի անկախությունը:

Օլիվեր Բոլդուինը՝ հայտնի վարչապետի զավակը, հայտնի իր հակաբոլշևիկյան տրամադրություններով, որը 1920թ. վերջին -1921թ. սկզբին փոխգնդապետ էր հայկական բանակում, իր հուշերում բնութագրելով խորհրդային իշխանության առաջին ամիսները Երևանում, այն կարծիքն է արտահայտել, որ Հայաստանի համաձայնությունը Մոսկվայի պայմանների հետ ,,շատ ավելի պզտիկ զոհողություն,, էր հանդիսանում, քան այն, ինչ ի վերջո տեղի ունեցավ: Բոլդուինը պնդում էր, թե Հայաստանը կարող էր համաձայնվել, սակայն դա տեղի չունեցավ Բրիտանիայի նկատմամբ իր հավատքի պատճառով, այդ ,,հավատքը,, նա բնութագրում էր որպես կույր հավատ: Օ.Բոլդուինը արձանագրեց, որ Հայաստանը ունեցավ ,,կույր,, ,տարօրինակ մի հավատ Մեծ Բրիտանիայի նկատմամբ, որ շատ խոստումներ էր տվել նրան օգնելու և որ դրանով հանդերձ պարտության էր հասցրել թուրքերի առաջ ...,,: Եվ նորից կրկնում է, որ Հայաստանը ,,կույր հավատ ունեցավ Անգլիայի և ցանկացած անգլիացու նկատմամբ:[18] Իսկ նշանավոր պատմաբան Առնոլդ Թոյնբին, շատ ավելի նրբամտորեն մասամբ այդ դժբախտությունների պատճառը տեսավ անդրկովկասյան հանրապետությունների և Հայաստանի ,,կարճատես անջատողականության մեջ...,, ,փոխգործակցության ձախողման մեջ ինչպես նաև մասամբ Անկարայի ու Մոսկվայի դավադրության ու նախահարձակության մեջ: Եվ միայն կովկասյան այդ հանրապետությունների տապանագիրը գրելուց հետո դաշնակից տերությունները ,,պատասխանատվություն վերցրին,, իրենց վրա՝ ձևական հեղինակության պահպանման դրսևորումներ ցուցաբերելով: Անփորձ և անկազմակերպ անդրկովկասյան հանրապետություններին քաջալերելով, որ հույս դնեն իրենց վրա՝ առաջնորդության և պաշտպանության համար, նրանք ազդեցիկ զորակցություն ցուցաբերելու մտադրություն չունեցան և արգելեցին դրանց համաձայնության գալ, նախքան չափազանց ուշ լինելը: Ա.Թոյնբին դաշնակիցների հեղինակության ցուցադրումը, հակառակ իրենց ուժի պակասին, բնորոշել է որպես ,, բարոյական և քաղաքական վրիպում,,:[19] Հարկ է ընդգծել, որ այդ հանգամանքը հրաշալի է ըմբռնել նաև ՀՀ վերջին վարչապետ Ս.Վրացյանը, որը 1919թ. մայիսի 18-ի իր նամակում ընդգծում է. ,,Առ հասարակ Անգլիայի քաղաքականությունը դեպի մեզ մինչև վերջերս եղել է տմարդօրեն դաժան, քիչ բարյացակամ,,:[20]

Ազգերի Լիգան Պիղատոսի պես ձեռքերը լվաց և երես դարձրեց հայերից: Ակնհայտ դարձավ, որ Ազգերի ընկերակցությունը պարզապես Անտանտի մեծ տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և մյուսների կամքն է: Ճիշտ այն ժամանակ, երբ ժնևում գումարված էր Ֆրան-սիայի, Անգլիայի և այլ տերությունների վեհաժողովը ուր քննարկվում էր Հայկական Հարցը, Լոնդոնում գումարված էր Ֆրանսիայի,Անգլիայի և Իտալիայի Արտաքին գործոց նախարարների ժողովը: Թվում էր, թե Ազգերի ընկերակցությունը համաժողովներում պատրաստ է ընդունել Հայաստանին: Սակայն դա պատրանք էր: Այդ պատրանքը վերջնականապես ցրվում է այն բանից հետո, երբ նոյեմբերի վերջին Լոնդոնը տվյալներ է ստանում Հայաստանի հանրապետության խախուտ ռազմաքաղաքական իրավիճակի, մասնավորապես Կարսի անկման և Հայկական բանակի ջախջախիչ պարտության, ինչպես նաև խորհրդաթուրքական առաջխաղացման մասին:

Հայաստանի ջախջախումը շատ արագ կատարվեց: Ք.Կարաբեքիր փաշան 1920թ. նոյեմբերի 28-ին մի զրույցի ժամանակ պարզապես արձանագրեց. ,,Իմ խնդիրը հեշտերից չէր: Իհարկե, միմիայն Հայաստանի հետ հաշիվ տեսնելը այնքան էլ դժվար չէր, բայց հնարավոր էր՝ գործ ունենայի հայ-վրացական բանակների հետ: Դրա համար էլ ես պետք է հավաքեի այնպիսի ուժ, որ կարողանայի հաղթահարել ոչ

միայն հայկական, այլև վրացական բանակները: Հայկական զորքերը մեր կողմից ջախջախվեցին այնպիսի արագությամբ, որ Վրաստանը նույնիսկ չհասցրեց ուշքի գալ,,.[21]

Ազգերի Լիգան Լիգա: Սակայն Մ.Քեմալը խելամտորեն Հայաստանի դեմ պատերազմի դեպքում իրեն ապահովագրեց նաև ոչ մեծ, սակայն համեմատաբար լավ կազմակերպված բանակ ունեցող Վրաստանից: Այդ նպատակով Թիֆլիս ուղարկված Յուսուֆ Քեմալ բեյը բանակցություններ վարեց Վրաստանի նախարարների խորհրդի նախագահ Նոյ Ժորդանիայի և արտաքին գործերի նախարար Ե.Գեգեչկորու հետ: Վերջիններս էլ թուրքերին վստահեցրին, որ ,,հայ-քեմալական պատերազմի դեպքում Վրաստանը խստիվ չեզոքություն է պահպանելու,,.[22]

Ինչպես վկայում է ինքը՝ Ալ.Խատիսյանը, ,,ամենատագնապալի և ծանր րոպեին Հայաստանը լքվեցավ և գիտակցաբար թողնվեցավ մենակ: Թուրքերը տեսան այդ, հասկցան և բոլոր եզրակացությունները ըրին հօգուտ իրենց և ի վնաս Հայաստանի,,.[23]
ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը հայտնեց, որ ինքը ,,չի կարող Նահանգների զորքերը տնօրինել Հայաստանին ռազմական օգնություն ցույց տալու նպատակով և չի կարող առանց կոնգրեսի ֆինանսական օգնություն ցույց տալ նրան...,,.[24]

Անդրկովկասում ֆրանսիական հյուպատոս և Գերագույն կոմիսարի պաշտոնակատար Նեթեմանը հայտարարեց, որ ,,ներկայումս ստեղծվել է այնպիսի դրություն, որը թույլ չի տալիս դաշնակիցներին ուղարկել իրենց ուժերը Անատոլիա՝ հայ ուժերին անմիջական ռազմական օգնություն ցույց տալու համար,,.[25] Այս պատրվակը բավական էր, որ Լոնդոնից հրահանգ ուղարկվեր երեք մեծ տերությունների նախարարներին՝ մերժելու Հայաստանին:
Հատկանշական է նաև, որ չկա արևմտաեվրոպական դիվանագիտության պաշտոնական և ոչ մի նոտա, որ դատապարտեր 1920 թվականի աշնանը սկսված թուրքական հարձակումը Հայաստանի վրա:

Իսկ սկսված պատերազմը, չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը խոստացավ միջնորդություն՝ տերությունների կողմից բարոյական և դիվանագիտական աջակցության դեպքում, պարզապես ուշացած խոստում էր և շատ խորհրդանշական բնույթ ուներ: Հայաստանը պարտվեց, և դեկտեմբերի 16-ին Ազգերի Լիգան իր բանաձևում արձանագրեց, որ ԱՄՆ-ը ջանքեր կգործադրի հայ ժողովրդի փրկության և Հայաստանում կայունության ապահովման համար: Սակայն այդ բանաձևն էլ ընդունվեց այն ժամանակ, երբ Հայաստանի Առաջին հանրապետությունը արդեն մայրամուտ էր ապրել:

Մերժելով խորհրդայնացումը և այդ մասին բազմիցս արված առաջարկները՝ ՀՀ Դաշնակցությունը, իշխանությունը ամեն կերպ պահպանելու ձգտման մեջ զգալի կարծրություն դրսևորեց՝ միաժամանակ ավելի նպատակահարմար գտնելով բանակցել թուրքերի հետ:

Անտեսվել էր այն վճռական գործոնը, որ հայտնի տարածաշրջանում 1920թ. գարնանը ազդեցիկ ուժերն են բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, որոնց հետ հարաբերությունների կարգավորումից էր կախված Հայկական Հարցի փոխզիջումային տարբերակը: Այդ դիվանագիտական նրբությունը այդպես էլ չըմբռնվեց Հայաստանի Առաջին Հանրապետության դիվանագիտության կողմից, որի ներկայացուցիչները ուշացած մոտեցան Խորհրդային Ռուսաստանի հետ հիմնավոր բանակցություններին, կնքելով 1920թ. օգոստոսի 10-ի և հոկտեմբերի 28-ի համաձայնագրերը, երբ արդեն ռազմաքաղաքական իրավիճակն այլևս շտկել հնարավոր չեղավ: Արդյունքում, Ալեքսանդրոպոլի պայմանագրով Թուրքիան հարկադրեց հայկական պատվիրակությանը հրաժարվելու հենց Սևրի նշանավոր պայմանագրից՝ նպատակ հետապնդելով ,,մոռացնել տալ,, թե հայերին և թե եվրոպացիներին չարաբաստիկ ,,Հայկական Հարցը,,:

- *Օգտագործված գրականություն*

1. Կ.Սասունի. Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները./ Հայաստանը 1920-ին/.1968,Պէյրութ, էջ 13:
2. Հովհ. Քաջազնունի, Հ.Յ.Դաշնակցությունը անելիք չունի այլևս,. Վիեննա, Մխիթարյան տպարան, 1923,էջ 42:
3. Տես՝ Մ.Վ.Արզումանյան,Արհավիրքից վերածնունդ,Եր.,Հայ.հր.-ն,1973,էջ 231:
4. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում / 1828-1923/. պրոֆ. Ջ.Ս.Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր.. Հայաստան հրատ-ն, 1972, էջ 691:
5. Ալ.Խատիսյան, Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Աթենք, 1930, էջ 253:

6. Տես՝ Ագապի Նասիբյան, ,, Բրիտանիան և Հայկական Հարցը,, 1915-1923,, Պեյրութ, Հրատ-ն Հ.Բ.Ը. Միության Վահրամ Ապտալեան մշակութային հիմնադրամի, 1994, էջ 191-242:
7. Տես՝ Է.Ա.Զոհրաբյան, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր.: Ոսկան Երևանցի, հրատ-ն, 1997, էջ.339:
8. Տես՝ Զ.Ս.Կիրակոսյան. ,,Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ /1915-ից մինչև մեր օրերը/, գիրք երկրորդ.-Եր.: Հայաստան, 1983, էջ 281:
9. Տես՝ Է.Ա.Զոհրաբյան, նշված աշխատությունը, էջ 339:
10. Տես՝ ՀՀ նորագույն Պատմության Կենտրոնական Պետական Արխիվ /այսուհետև՝ /ՀՀ ՆՊԿՊԱ/, Ֆ.114,g.2,գ.37,թ.14:
11. Տես՝ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում / 1828-1923/, էջ 691:
12. Տես՝ ՀՀ ՆԿՊԿԱ,Ֆ.114,g.2,գ.37,թ.14:
13. Первый съезд народов Востока.Стенографические отчеты. Петроград,1920,с.124-125.
14. Տես՝ նույն տեղում:
15. Լեո.Անցյալից, Եր.: 1924,էջ 356:
16. Հովի.Քաջազնունի, նշված աշխատությունը, էջ. 43:
17. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 200,g.1,գ.443,թ.37:
18. Տես՝ Ագապի Նասիբյան, նշված աշխատությունը, էջ 235:
19. Տես՝ նույն տեղում, էջ 235-236:
20. Տես՝ Վրացյան Սիմոն, Հին թղթեր նոր պատմության համար, Բեյրութ,1962,էջ 288:
21. Տես՝ ՀՀ ՀՔԿՓԿՊԱ, Ֆ.4033,g.2,գ.1148,փ.10,թ.1:
22. Տես՝ ՀՀ ՊԿՊԱ,Ֆ.200,g.1,գ.443,թ.36-37:
23. Տես՝ Ալ.Խատիսյան, նշված աշխատությունը, էջ. 254:
24. Տես՝ ՀՀ ՆՊԿՊԱ, Ֆ.114, g.2,գ.37,թ.15:
25. Մշակ.Թիֆլիս,10.10.1920թ.:

Բովանդակություն

1. *Սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական իրավիճակը: Հասարակական խմբերի կողմնորոշումը* 3
2. *Ընդհանուր ռազմաքաղաքական իրադրությունը 1918թ.: Հայ-վրացական պատերազմը և կուսակցությունների դիրքորոշումը* 11
3. *Ջանքեր հատուկ ծառայությունների ստեղծման ուղղությամբ* 22
4. *Միլիցիայի ստեղծումը, պայքար ներքին կարգ ու կանոնի համար* 27
5. *Կուսակցությունների դիրքորոշումը բանակի և պատերազմի, ռազմական քաղաքականության հարցերում* 35
6. *Ռազմաքաղաքական իրավիճակը Հայաստանի հանրապետությունում 1920 թվականին և Հայկական հարցը Ազգերի Լիգայում* 49

Վանիկ Հրանտի Վիրաբյան
Հայաստանի հանրապետությունը 1918-20թթ. կառավարության
ռազմաքաղաքական գործունեությունը և կուսակցությունները
/հայոց քաղաքական պատմության էջերից/:

Խմբագիր՝ Ն.Ա.Խաչատրյան

Պատվեր 268 Տպաքանակ՝ 200 օրինակ:

Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տպարան
Համալսարանի և տպարանի հասցեն . 375009,
Երևան 9, Տերյան 105: